2005, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (205)

Արարատ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի նոր ուսումնական տարվա բացումը

Սեպտեմբերի 9-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դաւիճուում տեղի ունեցավ ճեմարանի 2005-2006թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանի սաներ, ծնողներ: Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Տ. Եղիշէ ավ. քհն. Սարգսյանը՝ նշելով, որ այս տարի ճեմարան է ընդունվել 43 դիմորդ: Ուսանողների ընդհանուր թիվը ճեմարանում այս ուսումնական տարում կլինի 240: Տեսուչ տեր հայրն ընդգծեց նաեւ, որ այս տարի լրանում է ճեմարանի վերաբացման 60-ամյակը, եւ որ այլեւս վերացել են բոլոր այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք առկա էին 1945 թվականին:

Ներկաներին իր հայրական օրհնությունը բաշխեց Նորին Սրբությունը:

«Օրե եւ հավատք: Հավատքով մենք պիտի մեր քայլերն ուղղենք այս կրթական հաստատություն, հավատքը պետք է հանապազօրյա աղոթքով զորացնենք մեր մեջ, որպեսզի պտղաբեր դառնա, որպեսզի գործի վերածվի: Գործով շենացնենք, զարդարի ինչպես մեր անհատական, այնպես էլ մեր հասարակական, հայրենական ազգային կյանքը: Այդ հավատքը կարող է պտղաբեր լինել, եթե մենք մեր հոգում կրում ենք սերը, սերը հանդեպ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ հավատավոր մեր ժողովուրդը: Այս երկու շնորհներով, այս երկու հատկություններով մենք պիտի կարողանանք մեր ժողովրդի սպասումին ընդառաջ ելնել:

...Այս տարի ազգովի տոնախմբում ենք Հայոց գրերի գյուտի 1600-ամյակը, եւ իմ մաղթանքը պիտի լինի, որ կարողանանք հոբելյանական այդ կարեւոր տարեդարձի խորհուրդն ընկալել, հաղորդ դառնալ նրան եւ այն վերարիմատավորել մեր ներկա կյանքի մեջ, մեր ներկա առաքելության գործում», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Հանդիսությունն ավարտվեց «Պահապանիչ»-ով եւ Հայրապետական մաղթերգով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Լիոն

Սեպտեմբեր 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Լիոնի առաջնորդ Կարդինալ Բաբբարեենի եւ Ս. Էջմիոնի Միջազգային խաղաղարարական համայնքի հրավերով մեկնեց Լիոն՝ մասնակցելու սեպտեմբերի 11-13-ը կայանալիք խաղաղությանը նվիրված միջեկեղեցական համաժողովին:

Վեհափառ Հայրապետին Լիոնի օդանավակայանում դիմավորեցին Կարդինալ Բաբբարեենի ղեկավարած պատվիրակությունը, ինչպես նաեւ տեղի հայ համայնքի ներկայացուցիչները՝ Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Նորվան եպս. Զաքարյանի գլխավորությամբ:

Սեպտեմբերի 11-ին՝ բացման հանդիսավոր Պատարագի ընթացքում, Վեհափառ Հայրապետն իր պատգամը հղեց ներկաներին, իսկ սեպտեմբերի 13-ին նախագահեց փակման էկումենիկ աղոթքի հանդիսավոր արարողությունը:

Խաղաղությանը նվիրված միջազգային կոնֆերանսին մասնակցեցին Եկեղեցիների պետեր եւ բարձրաստիճան հոգեւորականներ՝ Կաթոլիկ, Ուղղափառ, Անգլիական, Բողոքական եկեղեցիներից, ինչպես նաեւ միջազգային էկումենիկ կազմակերպությունների եւ այլ կրոնների ներկայացուցիչներ: Կոնֆերանսին ներկա եղան նաեւ բարձրաստիճան պետական այրեր՝ Ֆրանսիայից եւ այլ երկրներից:

Վեհափառ Հայրապետին որպես գավազանակիր ուղեկցում է Գեւորգյան ճեմարանի փոխտեսուչ Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Նանյանը:

ԽԱՉՎԵՐԱՑ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունից ի վեր անարգության եւ չարչարանքի նշան հանդիսացող խաչը դարձավ փրկության, նոր կյանքի, հավերժության եւ աստվածային սաստնաբաշխ Լույսի խորհրդանիշ:

Մեր Եկեղեցին տարվա ընթացքում խաչին նվիրված չորս տոն է նշում, որոնցից երեքը տոնվում են քրիստոնեական բոլոր դիր Եկեղեցիներում, իսկ մենք՝ Վարագա սուրբ Խաչի տոնը, ունի բացառապես հայկական նախապատմություն եւ նշվում է միայն Հայ Առաքելական Եկեղեցում:

Խաչին նվիրված տոներից վերջինը՝ Խաչվերացը, Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է եւ նշվում է սեպտեմբերի 11-17-ի միջեւ ընկած կիրակի օրը:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում եւ սարկավագական ձեռնադրություն Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում

Այս տարի սեպտեմբերի 11-ին՝ Խաչվերացի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ եւաեւ քահանայական ձեռնադրություն: Հայ Եկեղեցու հնավանդ կանոնների համաձայն՝ նախորդ օրը խարտավիլակ Տ. Սուշեղ աբդ. Բաբայանի վկայությամբ կատարվեց քահանայացուների ընծայումը (վերանվանվելով Տ. Ստեփանոս):

Հավարտ ձեռնադրության սրբազան հայրը նորընծաների պատգամեց.

«Միայն ծիսավատարություն չէ, սիրելիներս, քահանայությունը, եւ այս խոսքս կուզեմ ուղղել նորասած մեր քահանա հայրերին: Շատ կարեւոր է



ման հանդիսավոր արարողություն, իսկ հաջորդ օրը, ձեռամբ Կեստրոնական Եվրոպայի եւ Շվեդիո Հայրապետական Պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի, քահանայության աստիճանի արժանացան նախկին ճեմարանականներ՝ Տ. Խաչատուր վրդ. Քեսաբյանը (վերանվանվելով Տ. Խաչատուր), Սանուկ վրդ. Դալալյանը (վերանվանվելով Տ. Սեբեոս), Դավիթ սրկ. Միքայելյանը (վերանվանվելով Տ. Դեբեոնի), Հոռ սրկ. Գրիգորյանը (վերանվանվելով Տ. Գրիգոր), Անդրանիկ սրկ. Հակոբյանը (վերանվանվելով Տ՝ Սաշտոց) եւ քահանայից կազմությամբ Արմեն սրկ. Մկրտչյանն (վերանվանվելով Տ. Մեսրոպ) ու Վարդան սրկ. Ավետիսյանը (վերանվանվելով Տ. Սարգիս):

Ուրախ եմ, որ մեր ազգի մեջ դեռեւս կան պաշտամունքը, շատ կարեւոր են սուրբ խորհուրդները, բայց միայն այդ չէ քահանայի պաշտանը. նույնքան սուրբ է ապեստարանի խոսքը: Մենք եւ խորհրդավարությունն ծառաներն ենք, եւ սուրբ խոսքի: Սուրբ խոսքը սուրբ եւ ուղղանա ձեւով ժողովրդին պիտի բացատրեք, ժողովրդի սրտի մեջ պիտի դրոշմեք»:

Նույն օրը Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Աստված եպս. Քարամյանի, դպրության եւ սարկավագության աստիճաններ շնորհվեցին քահանայից լարանան ավարտած 10 սաների:

Տե՛ս էջ 2

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 3-6-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Մեծ Եղեռնի զոհերի սրբադասման հարցն ուսումնասիրող հանձնաժողովը գումարեց իր անդրանիկ նիստը:

Հանձնաժողովի անդամներն են՝

1. Գեղաշնորհի Տ. Սեպուհ արք. Սարգսյան (համաատենապետ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն)
2. Գեղաշնորհի Տ. Եզնիկ եպս. Պետրոսյան (համաատենապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոսություն)
3. Գեղաշնորհի Տ. Գեղամ եպս. Խաչերյան (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն)
4. Հոգեշնորհի Տ. Բաբկեն ծ. վրդ. Չարյան (ատենադպիր, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն)
5. Հոգեշնորհի Տ. Զատիկ վրդ. Ավետիքյան (ատենադպիր , Ամենայն Հայոց Կաթողիկոսություն)
6. Հոգեշնորհի Տ. Դանիել վրդ. Ֆնտկյան (Ամենայն Հայոց Կաթողիկոսություն)

Նիստից առաջ հանձնաժողովի անդամներին ընդունեց եւ իր օրհնությունները բաշխեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Վեհափառ Հայրապետը՝ կարեւորելով նախաձեռնված աշխատանքները եւ հաջողություն մաղթելով հանձնաժողովին:

Գեղաշնորհի Տ. Եզնիկ եպս. Պետրոսյան օրհնությունը: Տ. Սեպուհ արք. Սարգսյան հափառ Հայրապետին՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունը: Տ. Սեպուհ արք. Սարգսյանը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական ողջույնները՝ հաջողություններ մաղթելով հանձնաժողովի աշխատանքներին:

Հանձնաժողովը մտքերի փոխանակումից եւ հիմնավոր քննարկումներից հետո հաստատեց առաջադրանքը, ուսումնասիրության շրջանակները, աշխատանքային ժամանակացույցը եւ ընդգծեց հիմնական հարցադրումները:

Առաջին աշխատանքային ժողովը տեղի կունենա սույն թվականի նոյեմբերի 8-12-ը՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում:

ՄԱՍԼՈ ՀԱԴՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տե՛ս էջ 1

ՆՈՐ ՆԵԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Տ. Ղուկաս աբեղա Չաքարյանը՝ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն

Սույն թվականի սեպտեմբերի 1-ից, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, Տ. Ղուկաս աբեղա Չաքարյանը, ավարտելով բարձրագույն ուսումնառությունը Հռոմում, նշանակվել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն:

Տ. Ղուկաս աբեղա Չաքարյան

Ծնվել է 1973թ. նոյեմբերի 9-ին Երեւանում:

1980-1988թթ. սովորել է Երեւանի թիվ 52 միջնակարգ դպրոցում:

1988-1990թթ. ուսումը շարունակել է հայագիտական թեքումով թիվ 10 դպրոցում:

1990-1997թթ. ընդունվել եւ ավարտել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանը:

1993-1994թթ. ծառայել է ՀՅ զինված ուժերում:

1996թ. դեկտեմբերի 24-ին ստացել է սարկավագական աստիճան:

1997-2000թթ. պաշտոնավարել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզության կենտրոնում՝ իբրեւ հրատարակչական բաժնի անդամ եւ կրոնի ուսուցիչների վերապատրաստման լսարանների դասախոս:

2000թ., ձեռամբ երջանկայիշատակ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի, ստացել է քահանայական աստիճան:

2000-2002թթ. պաշտոնավարել է Ս. Գեղարդաց վանքում՝ իբրեւ վանահայր:

2002-2005թթ. ուսանել է Հռոմի արեւելյան կոնտիֆիկալ ինստիտուտի կանոնագիտության ֆակուլտետում, որտեղ պաշտպանել է գիտական թեզ՝ «Գերագույն իշխանությունը Հայ Եկեղեցում (մինչեւ V դար)» թեմայով:

2005թ. հունիսի 14-ին ստացել է կանոնագիտության մագիստրոսի աստիճան:

Տ. Վազգեն աբեղա Նանյանը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Տ. Վազգեն աբեղա Նանյանը, որը վերջերս է ավարտել բարձրագույն ուսումնառությունն Իռլիայում, սեպտեմբերի 1-ից նշանակվել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ:

Վազգեն աբեղա Նանյան

Ծնվել է 1976թ. հոկտեմբերի 15-ին Երեւան քաղաքում:

1983թ. ընդունվել է տեղի Ջերժինսկու անվան թիվ 20 եւ 1993թ. ավարտել թիվ 149 միջնակարգ դպրոցը:

1993-1998թթ. ուսանել է Սեւանի Վազգենյան դպրանոցում:

1998թ. Վիլենովի Ուղղափառ ակադեմիայում հետեւել է անգլերենի դասընթացներին:

1998-1999թթ. ուսումը շարունակել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

1999թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ:

1999թ. եղել է Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդի քարտուղար, ապա՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպման գրասենյակի գործավար-քարտուղար:

1999-2002թթ. ծառայել է Վեհարանում՝ իբրեւ Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիր:

1999-2000թթ. մասնակցել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի կողմից եկեղեցականների համար կազմակերպված մեսեջմենտի դասընթացներին:

2000թ. պաշտպանել է ավարտական՝ «Ս.Սրբոց Հոգու եզրաբանությունը եւ «բխում» եզրի արտացոլումը հայ դավանաբանական աստվածաբանության մեջ» թեմայով:

2001թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

2002-2005թթ. սովորել եւ ավարտել է Հռոմի Պապական Գրիգորյան համալսարանի դավանաբանական աստվածաբանության ֆակուլտետը՝ իբրեւ ավարտական ներկայացնելով «Տյանընդնաաջի աստվածաբանությունը հայ մանրանկարչական ավանդության մեջ»:

2003-2004թթ. հետեւել է նաեւ Հռոմի Պապական քրիստոնեական հնէաբանության համալսարանի դասընթացներին:

2004-2005թթ. մասնակցել է Ֆրանսիայի Բեզանսոն քաղաքում կազմակերպված ֆրանսերենի դասընթացներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՍԱՐՈ

ԴԱՎԹԻ ԱՆՀԱՂԹ

Սերբող Աստվածընկալ Սուրբ Խաչին

Արգարեն ձայնում է. «Բարձրացրեք մեր Տեր Աստծուն, երկրպագեցեք նրա սուրբ ոտքերի պատվանդանին» [Սաղմ. 98, 5]: Եւ նույնպես նույնն եմ քարոզում՝ Հոգու ազդմամբ ձայնելով: Որովհետեւ եթե այն սուրբ ու պատվական այրը, իբրեւ ճշմարտության օրինակ՝ Սիոն լեռը, մանավանդ այնտեղ լինելիք շնորհների մշտնջենավորությունը տեսավ՝ այն նմանեցնելով Աստծո տաքերի պատվանդանի, եւ հորդորից իսրայելյան ազգին՝ երկրպագել ու բաձրացնել Աստծուն, ապա նաեւ ինձ՝ անարժանիս, ոչ մի դատապարտություն չի հասնի այժմյան խոսքերիս ստուգության պատճառով:

Քանի որ մեր առջեւ գտնվողը օրինակ չէ, այլ օրինակի ճշմարտությունն, եւ ո՛չ խորհրդով պատվանդան միայն, այլ նաեւ տաճար, սեղան եւ աթոռ: Այս սրբությունն իսկապես Աստծո ոտքերի պատվանդան է, իսկ իմանալի սուրբ լեռը՝ դիտանոց. այդպես է թարգմանվում Սիոնը: Որի համար էլ սուրբ, կատարյալ

հավատի բոլոր մանուկներին երկրպագության հորդոր ենք անում: Քանի որ ճշմարիտ աստվածօրհնությունն ու երկրպագությունն այս է. եղբայրնե՛ր, եկեք երկրպագենք երիցս փափագելի ու քրիստոսազարդ այս սուրբ Նշանին: Քանի որ սա մեզ համար ասիր է՝ փոխվելու մահվանից կյանք, կյանք, որն անցավոր ու երկրավոր չէ, այլ անվախճան է, անճառելի ու անմատչելի: Որ առավել է, քան հրեշտակական բարերջանկությունը՝ ըստ Ավետարանի խոսքի: Քանզի սա մեզ մարմնի դյուրություններից եւ այն ամենից, ինչ աշխարհում կա, հետ է պահում առանց իրձի, եւ սա է մեր փրկության պատճառը այն պատերից, որ հաստատվել են մեր հոգում:

Արդ, մեր այսքան եւ այսպիսի բարիքների համար ինչպիսի՞ գոհություն պիտի հայտնենք: Որքան մեր կարողությունն է, գովասանական երգերով միշտ խոնարհվելով՝ երկրպագենք: Եվ եթե խոնարհվենք, հեռու վանենք ծանր ու թմրեցնող ամեն մի խորհուրդ, հոգու հատակ տեսությամբ թեթեւացած՝ արժանանանք երկնային խորհուրդի եւ դեպի բարձրագույնը բարձրանանք:

Քանի որ ոչ թե փոքր բան կամ այդ տեսանելին է մեր առջեւ, այլ որ դրանով ու դրա մեջ մեծն ու հրաշալին է ծածկված, հիացնող ամենվոր զորությունը: Քանի որ կրկնակի եւ ոչ թե մեկն է դրա զորությունը:

Թեեւ հողից ածած բույսի տունկ՝ փայտ է երեւում մեզ, սակայն նրա մեջ է այն, որ երկիրը, միաժամանակ նաեւ ամբողջ երկինքը կրելու զորություն ունի, որին մոտենալ կամեցողը հարկ է, որ հույժ մաքուր լինի: Քանի որ եթե երկնքի բուն Մաքրագույնի առջեւ սերովբեները թեւերով երեսները ծածկած են կանգնում, ապա անարգելերիցս եւ հողանյութերիցս որքա՞ն արժանավոր մաքրություն է պահանջվում:

Սակայն ինձ փոքր չի թվում հիանալը անեւնների այլափոխությամբ, որ զանազանվում է յոթս եղանակով՝ բնական, մասնավոր այն, ձեւական եւ իմացական: Բնականն այն է, որ փայտը նոսխանուն է ասվում, մասնավորն այն է, որ միայն իրեն է հատուկ, օրինակ՝ կիպարիս, ձեւականը՝ որ խայն իբրեւ սպանության գործիք է հաստատված, իսկ իմացականը՝ վեր, քան ամեն մի խոսք՝ աստվածախաչ է այն եւ կյանքի գործիք:

Ո՛վ լի սքանչանա այս ասածներիս վրա՝ թե սպանման գործիքը միաժամանակ եւ կյանքի գործիք է: Սրա ձեւը դեպի մահ է նայել տալիս, իսկ սրա զորությունը՝ դեպի կյանք: Որովհետեւ բնությեանկից է այն տունկին, որով մահն է, թեեւ ոչ տեսակով, եւ կրում է այն տունկի զորությունը, որով կյանքն է, թեեւ ոչ բնությամբ: Քանի որ ճշմարիտ կյանքը, մերձենալով սրան, վատթար զորությունը՝ մահը, փոխեց լավի՝ կյանքի, որովհետեւ կյանք է պարգեւում այն ամենին, ինչին մոտենում է:

Խավարի դեմ լույս ունեմ այդ, որով ճշմարտվում է Աստծո խաչ լինելը: Եվ աստվածախաչ անվանելով այդ, ո՛վ աստվածասերներ, մի՛ ամաչեք, քանի որ այն պարծանքների պարծանք է մեզ համար՝ ըստ Պողոսի. «Ո՛վ Տիմոթեոս, ամոթ մի՛ համարիր վկայել մեր Տեր Հիսուսին, այլ մասնակի՛ց եղիր ավետարանելու Աստծո զորությունը, որ մեզ փրկեց» [Բ Տիմ. 1,8]: «Որովհետեւ կորստյան մատնվածների համար խաչի քարոզությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծո զորություն» [Ա Կոր. 1,18]: Եվ՝ «Ես եւս ամոթ չեմ համարում Աստծուն ավետարանելը, քանի որ այն Աստծո զորությունն է՝ ի փրկություն բոլոր հավատացյալների» [Հռ. 1,16]: Ապա ուրեմն սա ոչ թե ամոթ է մեզ, այլ պարծանքների պարծանք, քանի որ մեր աստվածացող փրկությունն է:

Չվարթուր Տիրոջ գերեզմանի մոտ մարդկորեն խորհող տրտմած կանանց ժխտեց. «Փրկչի՞ն եք փնտրում, ո՛վ կանայք, խաչ ելածի՞ն, հարություն առավ» [Մարկ. 16,6]: Նրանցից, իբրեւ Աստծուն հույժ մերձ գտնվողներից ու վեհերից, մեզ պետք է ուսանել գիտություն եւ բարեպաշտություն՝ նրանցից օրինակ առնելով:

Իսկ ո՞վ արդյոք առաքյալի պես սրան կասի զորությունն աստվածային սուրբ զորությունից, քանզի հեթանոսները ոչ մի զորություն ճշմարիտ Աստծունը չեն համարում, նույնիսկ ձյան սառեցնելն ու կրակի այրելը, մինչդեռ միակ ճշմարտի մեջ է ամենայն զորությունն:

Սա նշանն է Աստծո՝ մարդկանց հանդեպ սիրո. ինչպես աստվածային Գիրքն է ասում. «Աստված Իր՝ մեր հանդեպ սերը հայտնեց. մենք մեղավոր էինք, Քրիստոս մեզ համար մեռավ» [Հռ. 3,8]: Եվ՝ «Աստված այնքան սիրեց մարդկանց, մինչեւ Իր Միածին Որդուն տվեց» [Հովհ. 3,16]: Եվ՝ «Նրա՛ մեր նկատմամբ սերը նրանով երեւաց, որ Իր անձը դրեց մեզ համար» [Եփես. 5,2]: Եւ՝ «Ոչ ոք չունի այնպիսի սեր, որ իր անձը դնի իր բարեկամի համար, ինչպես որ ես եմ դնում իմ անձը» [Հովհ. 15,13].- վկայում է Տերը: Արդ, Նա, Ով Իր անձը դրեց, սրանո՞վ դրեց, սրա՞ վրա դրեց եւ տակավին սրա վրա է ու չի բաժանվում սրանից:

Ուրեմն հիրավի, ինչպես ասվեց, Աստծո զորությունն է սա. թեեւ սրա վրա Գամվածը մարմնով իջեցվեց վրայից, սակայն Գամվածի զորությունը նաեւ այսօր է սրան միացած: Քանի որ ով հաճեց սրա վրա բնակվել, սրանից չբաժանվեց, այլ բնակվեց, բնակվում է եւ պիտի բնակվի:



Այսուհետեւ արժանանանք հաղորդվելու սրան՝ համբուրելով այն ոչ իբրեւ սոսկ խաչ, այլ իբրեւ նույն Իրեն՝ այստեղ գամված Աստծո անավոր զորությունը: Որովհետեւ իսկապես այստեղ է Նա, որովհետեւ ով սրա վրա էր, այժմ էլ սրա վրա է եւ սրա վրա պիտի լինի մինչեւ հավիտյան: Եվ եթե Հոի ու օրինակի ժամանակ այսպես է ասում. «Այս է հանգստավայրն իմ հավիտյանս հավիտենից, սրա վրա պիտի բնակվեմ, որովհետեւ հավանեցի սա» [Սաղմ. 131,14], որքա՞ն ավելի Նորում եւ ճշմարիտում այսպես կլինի:

Ասվում է. «Լեռը, որի վրա բարեհաճեց բնակվել Աստված, եւ Տերն իսկ բնակեցնում է այնտեղ հավիտյան» [Սաղմ. 67,17]. այս խոսքը հեռու չէ իմ ասածից: Նույնը նաեւ սաղմոսի հեքորդ տողն է ցույց տալիս՝ անվանելով այն Աստծո կառք, որ եկավ բարձունքները՝ գեղյաներին փրկելու. այն բնությունը, որ ոչ մի կաքի կարիք չուներ:

Ասվում է, թե քառադեմ էր կառքը, այս կառքը նույնպես քառադեմ է՝ խաչակառք, որի վրա բարձրացավ Էմմանուելը եւ ստուգապես կառավարելով՝ ավար առավ գերվածներին: Սակայն չի ասվում, թե կառքը տեր չունի, այլ որ Տերը սրա վրա է: Որպեսզի ցույց տա, թե Իր՝ երկինք ելնելուց հետո այս կառքը երբեք չդատարկվեց եւ թափուր չմնաց եւ հավիտյան թափուր չի մնալու, այլ լի է գեղյան ելնամով հավիտյան չի դատարկվելու: Որովհետեւ ոչ թե ժամանակավոր, այլ մշտնջենավոր սարագին՝ սրա վրա Մորթվածին է հավատում Եկեղեցին, ուստի Տիրոջից հրամայվեց զեման նույն խորհուրդը կատարել միշտ, անդադար, մինչեւ Նրա երկրորդ հայտնությունը:

Շարունակությունը՝ էջ 4

ՀՐԱՇՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 11-12, 16

Սրբերի վկայաբանությունները, տարբեր հրաշքների մասին պատմությունները կարծես թե այս աշխարհից չլինեն, որովհետեւ առաջին հայացքից չեն առնչվում մեր սովորական առօրյայի, կենցաղի հետ եւ ինչ-որ տեղ օտար են թվում մեզ: Ասվածաշունչը, սակայն, շեշտում է, որ ասվածային իմաստությունն այս աշխարհի իմաստունների համար հիմարություն է թվում: Նախկինում մարդկանց իմաստությունն էր տրված, որպեսզի ամեն ինչ՝ եւ՝ բնության երեւույթները, եւ՝ տիեզերքը, եւ՝ մարդկային ներաշխարհի յուրաքանչյուրությունները ըմբռնով՝ հասնեին ճշմարիտ ասվածաճանաչողության: Սակայն մարդիկ, իրենց տրված այդ իմաստությունն օգտագործելով, չկարողացան ճշմարտությանը հասնել եւ ճիշտությամբ մեզ ընկան: Ո՞վ կար արդյոք ավելի իմաստուն եւ գիտնական ժամանակ ավելի հիմար, քան հույները: Հույները մեծ առաջադիմություն էին հասել գիտության, փիլիսոփայության եւ այլ բնագավառներում, սակայն այդ ամենով հաղթող ասվածաճանաչողության հարցում ընկել էին ամենամեծ հիմարության մեջ եւ պաշտում էին կուռքեր, բնության տարբեր երեւույթներ: Այդ իսկ պատճառով էլ, պետք է ասել, որ ասվածճանաչողության հարցում բանականությունը էակամ դեկտատարում չունի: Ասոծուն ճանաչելու համար առավել կարեւոր է սիրտը, ներքին վստահությունն ու հավատը: Ուստի ասվածային իմաստությունը, հրաշքները, հայտնություններն ասես չեն համապատասխանում մեր մարդկային գիտության, մտածողության եւ ըմբռնողության չափանիշներին: Սակայն հավատքով, սրտի վստահությամբ մարդը կարողանում է ճանաչել երկնայինը: Եվ այս վստահությունը մարդուն երբեք հուսախաբ չի անում: Ասոված ապացուցում է մարդկանց, որ հավատքն ու վստահությունը դատարկ կամ անիրական հույսերի վրա չեն հիմնված՝ անկախ այն բանից՝ դրանք համապատասխանում են մարդկային իմաստության կամ տրամաբանության չափանիշերին թե ոչ: Հետեւաբար մարդկային իմաստության չափանիշերին անհամապատասխան գտնվելը երբեք չի կարող մեզ համար արգելք հանդիսանալ, որպեսզի մենք կորցնենք մեր սրտի վստահությունը, մեր հավատքն առ Աստված: Եվ ինչպե՞ս կարող է ասվածայինը տեղավորվել մարդկային չափանիշների մեջ. չէ որ այն անհամեմատորեն ավելի մեծ է եւ ավելի ընդգրկուն: Եվ, ահա, որպեսզի ասվածային իմաստությունը ձեզ երբեւէ անհեթեթություն չթվա, այդ պահին մտածեցեք, որ դրանում եղեւում է ոչ թե անտրամաբանությունը, այլ երկրայինից ասվածայինի անհամեմատորեն շատ ավելի վեր ու շատ ավելի բարձր գտնվելը:

Այսօր շատերին հուզող մի մտահոգություն կա. «ԱյնՀ ժամանակ հրաշքներ եղան եւ թագում մարդիկ տեսան ու հաստատվեցին իրենց հավատքի մեջ: Այսօր մենք տեսնում ենք, որ մարդկության մեծ մասը կորած է անբարոյականության ու հազարավոր մեղքերի մեջ: ՈւրեմնՀ թող որ հիմա է այդպիսի հրաշքներ լինեն, որպեսզի մենք էլ հավատանք»: Երբեք չպետք է մոռանաս, որ ոչ բե հավատքն է հրաշքից, այլ հրաշքը՝ հավատից: Հրաշքը լինում է հենց այն պատճառով, որ մարդիկ հավատում են: Լոկ հրաշքի վրա հիմնված հավատքը սիեմ է ու դատարկ, եւ առաջին իսկ ահիրի դեպքում ոչնչանալու է ու կորչելու: Դա շատ լավ երեւում է հրեաների պատմությունից՝ արտացոլված Ասվածաշնչի էջից գրքում: Հրեաները հրաշքով դուրս եկան եգիպտոսից, հրաշքով անցան Կարմիր ծովի միջով, հրաշքով կերակրվեցին անապատում, սակայն հենց առաջին իսկ ահիրով ոսկե հորդ ձուլեցին եւ սկսեցին պաշտել այն: Հետեւաբար հրաշքի ցանկությունը խոսում է ոչ թե հավատք տանող մեր ձգտումի մասին, այլ առաջին հերթին մեր թերահավատության եւ մարմնական զգայմունքներին ու կրքերիի գերի լինելու: Երբ մարդու սիրտը լցված է չարությամբ եւ մարմնական կրքերով, ոչ մի հրաշք չի կարող նրան հավատացյալ դարձնել: Ճիշտ այնպես, երբ դժոխքում տանջվող մեծահարուստն աղաչաբով խնդրեց Աբրահամին, որ դրախտից Ղազարոսին ուղարկի իր հոր տունը, որտեղ հինգ եղբայր ուներ, որպեսզի նրանք փոխեին իրենց չար կյանքը եւ մահից հետո դժոխք չընկնեին, Աբրահամը պատասխանեց. «Եթե Մովսեսին եւ մարգարեներին չեն լսում, մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն»:

Սակայն ո՞վ է ասում, թե այսօր հրաշքներ չեն լինում: Բայց մեր օգտի համար բացում հրաշքներ ծածուկ են կատարվում: Շատ-շատ մարդիկ կարող են հիշել իրենց կյանքում կատարվածները, երբ հրաշքով փրկվել են մահից, կործանումից, ոմանք էլ հրաշքով առողջացել են, հրաշքով լուծել կենսական անլուծելի շատ խնդիրներ:

Հովնան մարգարեի՝ երեք օր կետի փորում մնալու պատմությունը շատերի մեջ կարող է անհավատալի իրողություն տպավորություն թողնել, բանզի հայտնի է, որ կետերը, չնայած իրենց հսկա չափերին, ուտեն կերակրափող եւ սնվում են հիմնականում փոքր ձկներով ու փափկամարմիններով: Բայց մարգարեության չարունակության մեջ կետ ձուլը կոչվում է նաեւ վիշապ ձուլ, որով հասկանալի է դառնում, որ անվանումը պարզապես ցույց է տալիս սոսկ ձկան մեծությամբ հանգամանքը: Այս դեպքն, անշուշտ, կարելի է հրաշք համարել: Տարբեր են հավատացյալները: Մարդիկ կան, ովքեր ընում են ամեն ինչ եւ նոր են հավատում, ինչպես Թովմաս առաքյալը, մարդիկ էլ կան, ովքեր իրենց կյանքում, տիեզերքում, բնության մեջ արդեն զգացած լինելով ասվածային ներկայությունն ու գործունեությունը, անվերապահորեն հավատում են Ասոծո ամեն մի խոսքին, Ասվածաշնչի յուրաքանչյուր գրքին: Այս նույն ձեւով Կարոլիկ Եկեղեցու մի հոգեւորական, խոսելով Հովնան մարգարեի մասին, ասել է. «Եթե նույնիսկ Ասվածաշնչում գրված լիներ, որ ոչ թե կետն է կուլ տվել Հովնանին, այլ Հովնանը կետին, ես դարձյալ կհավատայի»: Շատերն ասում են, որ հրաշքները հակասակ են բնության օրենքներին: Բայց հրաշքը պատճառի եւ հետեւանքի օրենքի խախտումը չէ. այն մի ինչ հետեւանք է, որը ծագում է դրան համապատասխան պատճառից: Եվ այդ պատճառը հանդիսանում է Ասվածն: Հովնանի հետ կատարվածն իրոք պատմական դեպք է, որովհետեւ այն հիշատակում է նաեւ Քրիստոսը՝ այն համարելով իբրեւ նախաշաւ Իր երեքօրյա թաղման:

Շարունակությունը՝ էջ 5

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵԿԵՂԵՑԻ





ՏԵՂԵՐԴԱԳ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍ Դ

ՏԵՐ ՀԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՆՐԱ ԲԱՑԱՌԱԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Սկիզբը՝ 2004-ի թիվ 23, 24, 2005-ի թիվ 1-7, 9, 11-16

1. Իբրեւ այս վկայության համար նեռաւոնություն՝ նշենք, որ Տեր Հիսուս Քրիստոսի հրաշքներն անհամար են: Բավական է մեջբերել ա Հովհաննես առաքյալի խոսքերն իր Ավետարանի վերջին գլուխներում. «Ուրիշ բազմաթիվ նշաններ էլ գործեց Հիսուսն Իր աշակերտների առաջ, որ չեն գրանցված այս գրքում» (20.30): «Ուրիշ շատ բաներ էլ Հիսուսն արեց, որոնք եթե մեկ առ մեկ գրվեին, կարծում եմ՝ աշխարհն էլ բավական չէր լինի տաճեու այդ գրքերը, եթե գրվեին» (21.25):

Ղուկաս Ավետարանիչն ասում է. «Արեւամուտին ամենը, որ գանեաան ցավերից տապասպող հիվանդներ ունեին, նրանց բերում էին Նրա մոտ, եւ նա նրանցից յուրաքանչյուրի վրա ձեռք դնելով՝ բժշկում էր նրանց» (Ղուկ. 4.41): Այսպես հրաշքները գործվում են հավատքակալներին՝ բազմաթիվ մարդկանց համար:

Նույնը նշվում է Մարկոսի Ավետարանում. «Երեկոյան՝ երբ արեւը մայր էր մտնում, Նրա մոտ բերեցին բոլոր հիվանդներին ու դիվահարներին, եւ ամբողջ քաղաքը դռների մոտ էր հավաքվել: Եվ *բժշկեց զանազան ցավերից տառապող բազում հիվանդների եւ բազում դեւեր հանեց...*» (1.32-34):

Մատթեոս Ավետարանիչն էլ ասում է. «Հիսուսը շրջում էր գալիլացիների բոլոր կողմերը, նրանց ժողովարանքներում սովորեցնում, նրանց ժողովարանքներում բարոզում եւ ժողովրդի մեջ եղած բոլոր հիվանդությունները ու ցավերը բժշկում: Նրա համբավը տարածվեց ամբողջ Ասորիքով, եւ զանազան ցավերից ու տանջանքներից տառապող բոլոր հիվանդները, դիվահարներին, լուսնոտներին ու անդամալույծներին Նրա մոտ բերեցին, եւ բժշկեց նրանց» (4.23-24):

Կարո՞ղ եմք հաշվել այդ «բոլոր հիվանդությունները ու ցավերը», «բոլոր հիվանդներին, դիվահարներին, լուսնոտներին ու անդամալույծներին»: Ուստի Քրիստոսի աստվածությունն ապացուցելու համար մենք կարող ենք դիմել Ավետարաններում գրանցված միայն սակավաթիվ հրաշքների:

2. Տեր Հիսուսի հրաշքները բազմազան էին:

Սրանց թվում են արարման հրաշքները, մեդյաներին հարություն տալը, ծովի վրա քայլելը, բամբիներին, ալիքներին ու ծովին սաստելը, երկնքից համբարձումը, երկնքից իջնելը, փակ երկնքիը համբարձումը, երկնքից իջնելը, փակ դռնով մտնելը, կույսից ծնվելը, դեւեր հանելը, կույրի աչքերը բանալը, անբուժելի հիվանդությունների բժշկումը, ինչպիսին են բորոտությունը, անդամալուծությունը, կաղությունը, համրությունը, խլությունը եւ այնպիսի հիվանդությունները, որոնք, օրինակ, 38 կամ 18 տարի էին ձգվել եւ բժիշկներն անկարող էին գտնվել դրանք բուժելու: Սբ Մատթեոսն այս ամենն ընդհանրացրել-ամփոփել է «բոլոր հիվանդությունները ու ցավերը», «բոլոր հիվանդներին, դիվահարներին, լուսնոտներին ու անդամալույծներին» արտահայտություններն մեջ:

Ո՞վ կարող է բոլոր հիվանդությունները բժշկել, իշխանություն ունենալ բնության եւ ամեն տեսակ ու ամեն բանակի դեւերի վրա, եթե ոչ այս ամենի արարիչը՝ Ասված:

3. Տեր Հիսուսի հրաշքները գործվել են լոկ Նրա հրամանով կամ սաստով:

* Պետրոսի զոքանչին բժշկելիս Նա «սաստեց ջերմությանը, եւ այն թողեց նրան»: Եվ նա մատուցեցին Նրա մոտ բերեցին, եւ բժշկեց նրանց» (4.23-24):

(զոքանչը) խնդրեց վեր կացավ եւ սպասավորում էր նրանց» (Ղուկ. 4.40):

* Ավդամալոյծին բժշկելիս Տերն ասում է նրան. «Վեր կաց, մահիճդ վերցրու եւ տո՛ւն գնա» (Մարկ. 2.9): Նրա միայն հրամանը մարդուն առողջություն է պարգեւում, ուստի նա վեր է կենում եւ վերցնում իր մահիճը:

* Ծորդաված ձեռքով մարդուն բժշկելիս Տերն ասում է նրան. «Երկարեցրո՛ւ ձեռքդ», մարդն անում է սա, եւ նրա ձեռքը բժշկվում է (Ղուկ. 6.10): Հրաշքը կատարվում է լոկ Տիրոջ հրամանով, եւ այն հիվանդությունը, որ բժիշկներն անկարող էին գտնվել բուժելու, բժշկվում է:

* Դիդոջ ոգիները հանելիս Տերը հրամաեմ է տալիս կասատում նրանց, եւ նրանք դուրս են գալիս: Ուստի Նրա մասին մարդիկ ասում են. «Իշխանությամբ սաստում է նաեւ սիդոն ոգիներին, եւ հնազանդվում են Նրան» (Մարկ. 1.27):

* Տերն Իր հրամանով նաեւ լռեցնում է սիդիերեն ու հանդարտեցնում ծովը. «Վեր կաց, դադարի՛ր, պապանձվի՛ր», եւ քամին դադարեց, ու մեծ խաղաղություն տիրեց» (Մարկ. 4.39):

Անշուշտ ոչ մի մարդ չի կարող հրաման տալ բնությանը, հիվանդություններին ու մարմնավոր պակասություններին, որովհետեւ սա աստվածային գործությանն է հատուկ, եւ դա է պատճառը, որ այս հրաշքները վկայողները խոստովանում են Հիսուսի աստվածությունը, ինչպես արդեն նշել ենք:

4. Տիրոջ հրամանի գործությունն ակնհայտ երեւում է մեռելներին Նրա հարություն տալու ժամանակ:

* Հայրոսի դստերը հարություն տալիս Տերը նրան ասում է. «Տայի՛ր, կո՛ւմ», որ բարձանվնվում է. «Աղջի՛կ, ելա՛ կաս», վեր կաց»: Եվ աղջիկն անմիջապես վեր կացավ ու բալեց» (Մարկ. 5.41-42): Քրիստոսի հրամանով մահն այստեղ խափանվում է, եւ կյանքը՝ վերականգնվում:

* Նայինի այրու որդուն հարություն տալիս «ասաց. «Պատանի՛, ելա՛ կաս, վեր կաց»: Սեռածը ելավ նստեց եւ սկսեց խոսել» (Ղուկ. 7.14-15):

* Ղազարոսին հարություն տալիս «բարձր ձայնով աղաղակեց եւ ասաց. «Ղազարո՛ս, վեր կաց, դուրս եկ»: Եվ մեռածը ելավ կապված ոտքերով, երիգներով պնդված ձեռքերով ու վարշամակով պատված երեսով» (Հովհ. 11.43-44):

5. Երբեմն հրաշքը կատարվում էր պարզապես Նրա հպմամբ կամ ձեռք դնելու միջոցով:

* Գրված է. «Նա նրանցից յուրաքանչյուրի վրա *ձեռք դնելով* բժշկում էր նրանց» (Ղուկ. 4.41):

* Տեր Մաղբոսի՝ քահանայապետի ծառայի ականջը կտրվեց, Տերը *«դիպավ* ականջին եւ բժշկեց նրան» (Ղուկ. 22.51):

* Երկու կույրերին բժշկելիս Տերը *«դիպավ* նրանց աչքերին, եւ իսկույն տեսան ու հետեւեցին Նրան» (Մատթ. 20.34):

Շարունակությունը՝ էջ 6

ԳՐԻԳՈՐ ԱՐԵԿԱՑԻ

Սկիզբը՝ թիվ 11-16

Նարեկացու խոսքի մեջ շատ են քննիչ, դատավոր, դատախազ, դատաստան, ատյան, դատաստանի բեմ եւ համանման այլ արտահայտությունները, որ որոշակի վիճակ ու հարաբերություն են ձեւավորում: Դա էլ մղում է քանդելու մոլորությունների սովորությամբ կապկպված զգայարանները եւ տրվելու անմնացորդ խոստովանության: Նարեկացին ինքն այնպես է առարկայանում այս վիճակների մեջ, որ դառնում է լրիվ տեսանելի: Եվ տեսա նրան,- կարող է ասել Նարեկի յուրաքանչյուր ընթերցող:

Մեղավոր-քննիչ-դատավոր հարաբերության մեջ նա ոչ մի լավ բանի սպասում չուներ, քանի որ այդ լավը իր համար չէ. «Թե կերուխումի հրավեր ստանամ՝ կդողամ, թե հարցաքննության կանչվեմ՝ կկարկամեմ, թե իրավամբ քննվեմ՝ կիամրանամ» (ԻԳ, գ):

Նարեկացին Տիրոջն է դիմում՝ խնդրելով «միտ» չդրեել իր մեղքերը, քանզի Տիրոջ համար ավելի հեշտ է դրանք ջնջելը, քան իր համար՝ նկարագրելը (ԻԸ, բ): Այդպես է, որովհետեւ.

Ցանամ, եւ ոչ ինչ աւգտիմ,
Ոլոգիմ, եւ ոչ հասանեմ,
Փութամ, եւ ոչ ժամանեմ,
Անձկամ, եւ ոչ տեսանեմ,
Փափագիմ, եւ ոչ հանդիպիմ,
Կարաւտիմ, եւ ոչ պատահիմ... (ԻԸ, բ)

Նարեկացու խոսքի հյուսվածքն այնպիսին է, որ միավորում է տեսանելին ու անտեսանելին, երեւացողն ու գաղտնին, այլ կերպ՝ ներսն ու դուրսը: Ահա նրա կերպավորած էությունը. «Դեմքով ժպտուն է եւ մտքով՝ խոցված, երեսը ծիծղուն, եւ աչքն արտասվագին, Աստեղեւպ սփոփված է ձեւացնում իրեն, Իսկ արտասուքը սրտի դառնությունն է վկայում: Իր երկու ձեռքում երկու ըմպանակ, մեկն ա-ղյարմբ լցված եւ մյուսը՝ կաթով Միւնույն սրտում երկու զգացմունք՝ մեկը կասկածելի հույսի եւ մյուսը՝ ճշգրիտ կորստյան» (Լ, բ): Դա է պատճառը, որ իր ինքնարտահայտումը Նարեկացին համարում է «համայնապատում խոստովանություն» (ԼԲ, ա):

Շարժման երկու ուղղություն կա. մեկը՝ երկրից երկինք, որ ինքը՝ Նարեկացին է փորձում հաղթահարել եւ մերձենալ Աստծուն, եւ երկնքից երկիր, որ Սուրբ Հոգին իջնի եւ բնակվի իր մեջ: Երկրորդի կապակցությամբ գրում է. «Ո՛վ ամենապարգեւ ձեռք Հիսուս Քրիստոսի, Դարձի՛ր ոեպի ինձ, քո շնորհատու աչը կարկառելով, Բնակվի՛ր իմ մեջ եւ միացիր ինձ...» (ԼԲ, դ):

Փրկության հույսերի մեջ հարակայորեն խորանում է ողբերգության ցավը. ուրախության նվագեների փոխարեն ողբին լծակից խոսքն է. «Ուր կան հառաչներ, հեծություն ձայներ, ցասկոտ բողոքներ, Խորտակիչ նախատինքներ, սաստիկ լաց ու կոծ» (ԼԳ, բ): Նարեկացին ամբողջովին ձգտում է «ծածուկ խորհուրդների բարձրաձայն խոստովանության», որպեսզի «խոսքի հաղորդությամբ» արժանի լինի Երկնային Ամենակարող Տիրոջը: Այդ անկեղծությունն էլ, ինքնաչնչացմամբ այդ ինքնահաստատումը («Ես, որ իմ ձեռքով իսկ ջնջեցի ինձ») նրան ուժ ու վստահություն են տալիս դրանով «սպառազինված» մտնելու ասպարեզ (ԼԴ, ը):

Նարեկացին իրեն համարում է ողբերով, վայրերով ու տխուր ձայներով լեցուն «Շնչավոր մի մատյան» (ԼԹ, ա), որը Տիրոջ տեսիլքի առջեւ անպատվար քաղաք է, դրան ամուր փականքներից զուրկ տուն, «Ամ՝ միայն տեսքով եւ ոչ թե համով...» (ԼԹ, բ): Նարեկացին պատրաստ է հասնել մինչեւ բառերի վերջին սահմանը, իմաստների նրբերանգները, որպեսզի մեղքի որեւէ մասնիկ անսկատ չմնա, թաքնված չմնա: Եվ նա հենց դա էլ ասում է, որովհետեւ վստահ է. «Եթե մինչեւ իսկ բյուր հեղ մեղանչեմ, դարձյալ մեղավոր չեմ համարվի, Ապավիներով քո կենսապարգեւ շնորհին, ո՛վ բարերար իմ եւ կյանքի տվիչ» (ԽԸ, ա): Այս վստահությունն ունենալով է, որ նա գայթակղության ենթակա մարդկային կերպը տեսնում է իր անընդհատական շարժման մեջ. «Ինչպե՞ս ընկավ բարձրացածը, Ինչպե՞ս սասանվեց հաստատվածը, Ինչպե՞ս կործանվեց կառուցվածը, Ինչպե՞ս օտարացավ ճանաչվածը...» (ԽԸ, գ):

Նարեկացին անընդհատ խորանում է գաղտնիի, ծածուկի, թաքնվածի մեջ: Արտաքուստ մարդու ու նրա մեղքը տեսանելի են, տեսանելի չեն ներքուստ, եւ իր ներքին աչքերով մարդն ինքը պետք է իրեն բացահայտի, որովհետեւ «Այդպես էլ առանց ծածուկ մեղքերի խոստովանության Եվ ինքնապարսավ մեղադրանքների՝ չկա քավություն» (Ծ, ա):

Նարեկացին խոսում է իր անունից, բայց համայն մարդկության ձայնով, սակայն առանց մարդկությանը մեղադրելու, այլ միայն իրեն՝ որպես բոլորի մեղքերի կրող եւ պատասխանատու. «Վրդ, եւ ճշգրիտ պատկերս ամենայն մարդկանց, Խառնելով մեղքերս նրանց մեղքերին, Եվ նրանցով դառնությունն իվ կրկնակի ավելացնելով՝ հեծեծեմ պիտի նրանց հետ դարձյալ...» (Ծ, գ): Այնուհետեւ. «Ղոգուս թեւերով շրջեցի մարդկանց անթիվ անհամար սերունդների մեջ Եվ ինքս իմ մեջ կշռադատելով չգտա ոչ ոք ինձ չափ մեղավոր. Ուստի գտնում եմ ես իրավացի համարել միայն մեղավոր ինքս ինձ, քանի թե իմ խոսքով շատերի դատապարտել» (ԾԵ, ա): Նարեկացին հույս ունի, որ իր դեմ մեղանչողներին ներելու համար գուցե Տերն էլ իրեն ներում շնորհի:



Նարեկացին ներկայանում է նաեւ խաբված մարդու ձանր հոգեբանությամբ, որը «անզգայապես» մահվան ծուղակն է ընկել, «Չհասկացա կորուստը, որոգայթն անգիտացա, Չտեսա որսացող ծածուկ մեքենաները, Չկասկածեցի կեղծավոր վարսի խաբեությանը, Չնկատեցի գայթակղությունը ինձ շրջապատած...» (ԾԵ, բ): Խտացնելով խոսքը եւ «չիմացած մահը չարիք» համարելով, դրանով իսկ կկայանչելով հին իմաստուններից նաեւ Եղիշեի միջոցով մեզ հասած հայտնի միտքը՝ Նարեկացին սահմանում է կյանքի անդառնալիության ողբերգական իմաստը.

Քանզի իբր զանգգայ պաճարս անանց՝
Մեռանիմք, եւ ոչ զոնչդիմիմք,
Կորնչիմք, եւ ոչ հիանամք,
Թաղեցեալ լինիմք, եւ ոչ խանահիմք,
Տարագրիմք, եւ ոչ տագնապիմք,
Եղծանիմք, եւ ոչ զոչանամք,
Մաշիմք, եւ ոչ մտառնմք,
Պակասիմք, եւ ոչ պատրաստիմք,
Գնամք, եւ ոչ զգուշանամք,
Գերիմք, եւ ոչ գգամք (ԾԵ, դ):

Շարունակությունը՝ էջ 6

ԴԱՎԻԹ ԱՆՇԱՂԹ

Սերբող Աստվածընկալ Սուրբ Խաչին

Սկիզբը՝ էջ 2

Ահա Հարություն Առածի վրա մնում են մեխերի տեղերը, տեգի խոցվածքը: «Այդ ի՞նչ վերքեր են քո ձեռքերի մեջ» [Զաք. 13,6],- մարգարեի միջոցով հարցումին պատասխանում է. «Սրանք այն վերքերն են, որ ես ստացել եմ իմ սիրելիի տանը» [Զաք. 13,6]: Նաեւ Նրա՝ աշխարի զալու մասին է ասվում. «Լայեցին, ում որ խոցեցին» [Զովի. 19,37]. ուրիշ ի՞նչ, եթե ոչ այս սուրբ Պատարագի մշտնջենավորության ու հավիտենականության մասին է ասում այս խոսքը հավատացողներին: Քանի որ անմահ է հավատող զոհը, անմահ է ու միշտ կենդանի: Քանի որ «Աստված Հոր մոտ է եւ առանց կասկածի մարդ է երկրում, եւ նույն՝ Աստված Հոր մոտ»: Եվ ինչպես որ ճշմարիտ Աստված է՝ անպարագրելի ու անբավ, որ մարմնով պարուսկակվեց Կույսի արգանդում եւ մարդկորեն ծնվեց. ըստ որում, ծնողն աստվածածին է, իսկ Ծնվածը՝ անպարագրելի ու անբավելի Աստված, այնպես էլ [հարկ] է Նրան հավատյորով հաղորդվել եւ մարմնով Նրա մահվամբ մկրտվել:

Որ այս խաչը Աստծո խաչ է, եւաչ Ելածը՝ անմահ, անպարագրելի ու անբավ Աստված, ոչ մի տարակույս չկա: Քանի որ եթե առժամանակյա եւ ոչ անմահ զոհ պատարագվեր այստեղ, ապա ժամանակվող կլիներ նաեւ Նրա՝ խաչ ելելը: Ապա ուրեմն ճշմարտապես անմահի պատարագ, զոհի զոհաբերման տեղ էր սեղան է այն: Եվ ո՞ւր արդյոք, եթե ոչ սրա վրա է Նա, Ում ահից դողում են երեւելիները ու աներեւույթները, սարսափած փախչում են դեւերն ու խավարի բոլոր իշխանությունները:

Այստուհետեւ հոգու՝ իբրեւ մարմնի աչքերով հայտնապես տեսնելով՝ հավատացի. իբրեւ թե հենց այժմ Հոր Միածինը սրա վրա բազկատարած մեխված երեւաց: Կարծես տակավին փրկական սուրբ արյան ցողը կենարար կողից մեր աչքերի առջեւ ցայտելով՝ աներեւույթ հրաշքով փրկագործում է բանական հողը:

Սակայն դեռեւս ամեն ինչ չէ, որ տեսնում ենք հնազանդված Նրան, «Ով ամեն բան հնազանդեցրեց գործով» [Եբր. 2,8]: Ուրեմն «մինչեւ ամեն բան լրվի» ասելով՝ հնազանդություն պետք է իմանալ, ուրեմն եւ՝ փրկություն: Եվ փրկություն ասելով՝ ամենքի փրկագործությունը, ինչպես գաղատացիներին ասաց. «Զեր աչքերի առաջ Հիսուս Քրիստոս նկարագրվեց խաչը ելած» [Գաղ. 3,1]: Դուք, որ էք կամենում հետեւել խաչին, այլ կերպ էք խորհում, քանի որ ուր խաչն է, այնտեղ է խաչվածը, իսկ ուր խաչն ու խաչվածն են, այնտեղ էլ խաչելությունն է:

Այդ, եթե խաչելության մասին լսողը եւ հավատացողը ակնատես է ասվում, ուրեմն ուր ակնատեսի խաչն է, ինչպե՞ս նրա առջեւ չի լինի խաչելությունը նույն հավատով: Արդ, ուրեմն խաչ ասելով՝ այստեղ Գողգոթա էնք հասկանում, Գողգոթա ասելով՝ խաչելություն, խաչելություն ասելով՝ զոհաբերություն էնք հասկանում, իսկ սրանով՝ փրկագործություն: Գողգոթա-գագաթը կառափնատեղին է, եւ այնտեղ է թաղված առաջին մարդը: Եվ ամեն բան այնտեղ է, քանզի գագաթը ցույց է տալիս սրա բարձրությունը, եւ կառափնատեղին՝ սրա ձեւը, դրա հետ միասին՝ նաեւ թաղումը, քանզի փայտով վիրավորված Մդամը, նրանով իսկ ընկնելով՝ մեռավ: Եվ երկնային Մդամը, գթասիրաբար կամենալով նորագործել այստեղ թաղված ծառայի եւ նախահոր փրկությունը, հավիտենական արդարությունը բերեց՝ նման մարմնով լուծելով նրա մեղքը եւ մարմնով ճաշակելով մահը՝ սպանեց նրա մահը եւ Գողգոթա անվանվածը երկինքներից վեր բարձրացրեց:

Եվ մեղքի պատճառ անսուրբ փայտը փրկության պատճառի եւ սրբության սրբոցի, սպանման տեղը՝ կենսագործման տեղի, թաղումը՝ սքանչելի հարության փոխարկեց: Եւ փրկությամբ մեղքի պատճառը վերացրեց, այն երկինքների երկինք եւ փառքի աթոռ դարձրեց եւ հավիտյան այնտեղ բնակվեց: Սրա պատիվը արդարապես ճանաչելը հավատն է հանդերձյալի նկատմամբ:

Իրենց բարեպաշտությունը ցույց տալու համար աստվածասեր թագավորներն ու մեծահարուստները, կամենալով զարմանալի ցույց տալ սրա պատիվը եւ որպեսզի մանկամիտ մարդկանց ձգեն՝ փափագելու այն, թանկագին քարերով զարդարեցին ու գեղեցկացրին այն՝ սրա պատիվը սոսկալի ու քսմտնելի ցույց տալով: Մինչդեռ սա գեղագույն, աստվածային, երկնային փառքով է զարդարված եւ սպասավորվում ու պաշտվում է հրեշտակների յոթնարփյան դասերի կողմից, որոնք իրենց Տիրոջն են տեսնում սրա վրա: Այն բազմաչափ սերովբէներով ու վեցթեւյան քերովբէներով է շրջապատված, որոնք իմանալի ձայներով անդադար երեքսրբյան սրբասացությունն են երգում սրա վրա բարձրացած Աստծուն: Քանզի բոլոր աներեւույթներից հավատի հաստատուն նշան երեւեցնող օրինակ է, Աստծո ամենիմաստ առաջնորդ: Հին Օրենքի խորանում քերովբէներն Աստծո հրամանով պատվում էին քավության սեղանը եւ հովանի էին լինում նրան, որի վրա անբան ողջակեզների արյունն էր հեղվում: Այնտեղ նախապես ակներեւ օրինակով սրա՝ պատիվը ցույց տրվեց:

Երկնայինների սեղան այս խաչը երկրավորներից կողմից խոստովանվում է ճշմարիտ քավարան: Եվ այս սեղան-խաչի եղջյուրները երկնային սուրբ Գառի՝ Աստծո Որդու դատաստկեան մեխերի փորվածքներից հոսած արյունից կարմիր ներկվեցին: Եվ մենք՝ երկրավորներս, սրա վրա այսպիսի փրկության համար մեր առքատիկ խոսքով կցորդվելով մարգարդայն երջանիկ հոգիներին՝ մեր փրկության համար գովասանք հատուցեցք այս փառավոր-յալ աստվածազոր սուրբ նշանին:

Շարունակելի

Աշխարհաբարի փոխադրեց
Մարթա ԱՐՄԱՊՍԼԸ

Սկիզբը՝թիվ 15, 16

Մինչեւ 1950-60-ական թթ. հայ երիտասարդությունը ցեղասպանությանը տեղյակ չէր այնպես, ինչպես Շեբասլիի Հաճնեցը չգիտեր իր հոր եղեռնական մահվան մասին բուն ճշմարտությունն ու հորեղբայր Կլավդիոսի ոճրագործությունը: Բացի նրանից, որ ակնարկով զուգահեռվում են ոճրագործ Կլավդիոս - բուրքն ու Հաճնեցի հոր վրեժխնդիր որվուկան - Եղեռնի զոհերը, որոնք միշտ իրենց «մորթված մարմնի վրեժն են հուշում», մեծ անգլիացին ներկայացվում է որպես բուրքի էության եւ նրա ցեղային բուրը ստոր որդեների հրաշալի գիտակ: 1570 թ. դեպքեր պատկերող իր «Օթելլո» ողբերգության մեջ նա կերտել է քսությամբ, խարդախությամբ ու սրիկայության անմրցելի տիպար Յագոյին, որը երբ կամենում է արդարանալ եւ մյուսների կասկածներն իրենից հեռու վանել, երկու ղղվագեներում բուրքի սառրագույն էությամբ խոր իմացությամբ երդվում է:

ԴԵԶԴԵՄՈՆԱ

Թո՛ւի թեզ, բաժնատոր:

ՅԱԳՈ

Ճիշտ է, բուրք դառնամ, թե սուտ եմ ասում:

(Շեբասլիի Վ., Ընտիր երկեր
երկու հատորով,
հ. 1, Երեւան, 1964, էջ 217)

Մի այլ ղղվագում գերխարդախն Յագոն երդվում է Կասիոյին ներկայությամբ.

ԿԱՍՍԻՈ

Ճի՛շտն ասա, խնդրեմ:

ՅԱԳՈ

Անագնիվ մարդ եմ, եթե սուտ ասեմ:

Ուրեմն Շեբասլիոր 16-րդ դարում հրաշալի գիտեր բուրքերին:

Թուրք դառնամ, թե սուտ եմ ասում եւ *անագնիվ մարդ եմ, եթե սուտ ասեմ* պրտահայտությունները Յագոյի համար պարզ ինքնաբնութագրումներ են, որոնց հանձնաժողովից պարզվում է, որ *թուրք*-ը եւ *անագնիվ*-ը նույնանիշներ կամ հոմանիշներ են, որոնք Շեբասլիրը գործածել է իր հերոսի էությունը բնութագրելու համար: Ինչպես երեւում է, սա նույնպես նկատի էր ունեցել «Հայոց դաղթականաթ» հեղինակը *(Պոմեր լրատվակերտ ժամանակներում՝ 1960-ական թթ. սկզբներին, Հ. Շիրազի գրասենյակից ամպակա էր Վ. Շեբասլիրի սեռակազմ հատորակը: Նկատել էի, որ այդ հատորում եւ մանավանդ «Օրեզը» ողբերգության էջերում ինչ-որ կարեւոր բան էր փնտրում: Լա՛ւ հիշողության թեկաղրանքով վերընթերցեցի ողբերգությունը եւ համոզվեցի, որ Շեբասլիրի «նեղկայությունը» պոնեռում եւ նրա կերպավորումը եղել է միանգամայն նպատակադրված. - Ս. Մ.):*

Մեսրոպ Մաշտոցը, Խորենացին, Գրիգոր Նարեկացին, Կոմիտասը եւ Ամրոցիկիը, հայոց Մտրի, Ոգու, Խոշի եւ բազմաչան ուժի մարմնացումները լինելով, առաջնորդել են մեր ժողովրդին նրա ոոց գոյամարտի ընթացքում: Պատշաճ էր, որ հենց սրանք՝ որպես դասալիցներ, լինեին Դանտեին, Հոմերոսին, Շեքսպիրին, Գյոթեին, Հայեցին, Բայրոնին ընկերակցողները, եւ բոլորը միասին դատապարտեին ցեղասպանին.

Մեծ Նարեկացու ուրվաքայլ ոգին
Ու մեծ Դանթի ոգին ուրվաքայլ՝
Համաքայլ, ինչպես իմ աչքն իմ աչքին,
Հոմերոսի հետ ընթանում էին առջեւից մեայլ...

Այսպես է Հ. Շիրազը լուծում հայոց վշտի համամարդկայնության խնդիրը՝ հատկապես ընդգծել կամենալով՝ տեսե՞ր ոմն են կոտորել թուրքերը, աշխարհի մեծություններին հավասար մեծություններ ծնած եւ համաշխարհային բաղաքակրթությունը հարստացրած ժողովրդին: Այդ ուրվակերպաքերը պոնեռում հաճախ են դառնում հեղինակի խոսափողը, եւ այն, ինչ ինչում է նրանց շուրթերով, բխում է նրանց ոգուց եւ համապատասխանում է նրանց ստեղծագործության մարդասիրական էությանը:

Այնքան տպավորիչ են Մեսրոպ Մաշտոցի, Խորենացու, Նարեկացու, Ամրոսիկիի ուրվակերպաքերը, որ ընթերցողը լիարժեք պատկերացում է կազմում նրանց գործի փրկարար դերի, ազգային ու համամարդկային նշանակության մասին: Նրանց անմեռ ոգիները հեղինակի հրավերով գալիս են սկզբում՝ Դանտեի հայտնվելուց անմիջապես հետո: Բնական է, որ հայոց մեծերից առաջինը Հ. Շիրազը Մեսրոպ Մաշտոցին է դիմում.

Հայտնվե՛ք եւ դուք, ո՛վ հայ ամնահներ,
Իջե՛ք, թե իրավ ամնահ է ոգին.-
Դո՛ւ, արե՛ւ Մաշտոց, գեր սոկերդ բեր,
Քո ուրվաքանն էլ մահ է մարդոքին:
Հայտնվիր եւ դու՛, մեծ Նարեկացի,
Ո՛վ աստվածապետ, մոնչա՛ եւ դու,
Դո՛ւ, որ բուրվառն ես մեծ առեղծվածի,
Որ կշռում էիր մեղերը մարդու,
Ասատու պես էիր Աստծու հետ խոսում,
Իջի՛ր, որ ազգիդ վիշտն էլ կշռես
Կատորածների լարիրիմբոսում...

Սուրբ Մաշտոցի գործի գիտական բնութագրումների կողքին միշտ էլ եղել են նրա գեղարվեստական ընկալումն ու պատկերավոր գնահատումները: Խ. Արովյանը, Մ. Նալբանդյանը, Ս. Շահազիզը, Բաֆֆին, Դեմիրճյանը իրենց երկերում եւ մանավանդ Սիամանթոն «Սուրբ Սեսրոպ» պոեմում արդեն ստեղծել էին Մաշտոցի կերպավորմամբ ու նրա գործը գեղարվեստորեն արժեւորելու որոշակի ավանդներ: Հ. Շիրազը, այնուհետեւ Պ. Սեւակը այդ ավանդների շարունակողներն էին նորագույն շրջանի հայ բանաստեղծության մեջ *(Տե՛ս մեր «Մեսրոպ Մաշտոցը Հովհաննես Շիրազի եւ Պարույր Սեւակի հայացքով» ուսումնասիրությունը. «Գրական հանդիսաթեռներ», գիրք Ա, Երեւան, 2003, էջ 408-420):*

Մաշտոցի նկատմամբ Հ. Շիրազը միշտ էլ ունեցել է առանձնահատուկ վերաբերմունք. բազմաթիվ բանաստեղծություններում, «Քառյակներ հայոց լեզվաստամոմ» շարքում եւ մանավանդ 1962 թ. գրած «Հայոց հրաշքը» պոեմում նա իրոր սրբացրել ու փառաբանել է Մաշտոցին՝ նրա անխոնջությունը, հանճարեղ գյուտի ազգաբերիչ դերի խոր ըմբռնումով.

Ամեն տատ հայ ազգապահ մի գինվոր է
անմեռնական ,
Ամեն բատ՝ հայոց մի գունդ, այբուբենդ՝
բանակն հայկական,
Մի զորք՝ անբերդ, անբուր, անտեգ, ան-
վերտ, անենտ ու անենիգան,
Բայց դուրս մտեց յոթ բշնամու բյուր զորքերին արնախգան...

«Հայոց դաղթականաթ» դատաստանամատյան-պոեմում Մաշտոցի կերպարն ստեղծվել է գեղագիտական այլ նպատակադրումով: Այստեղ նա պատկերված է որպես դարերի հորվածքում հայ ժողովրդի լուսավորության ջահը բոցավառած, նրա մտքի եւ հոգու գանձերը մայրենի լեզվով հրաշակերտած ու աշխարհին ներկայացրած մեր ժողովրդի հոգեւոր հայր, որը ծնողի իրավունքով, երբեմն լուսյայն, երբեմն մռուցով դատաստարում է մարդկության ու իր սիրասուն զավակների հանեցեպ գործված անեմխաղեպ ոճիրը: Աննշուշտ, նրա ոգեղեն կերպարն ստեղծվել է այն սկզբունքով, թե ոոց լինելու դեպքում ինչ կաներ եւ ինչ կասեր տեսնելով հայության՝ բարբարոսական եղեռնակերով ընաջնջումը, նրա ստեղծած՝ համայն մարդկությանը պատկանող մշակութային ու գիտական արժեքների ոչնչացումը, հազարավոր ձեռագիր մատյանների այրումը, հայոց բաղաքների, գյուղերի, վանքերի, իր իսկ ստեղծած դպրոցների վայրագ ավերումը, հայության պատմական ընթրաքի բռնագավթումը:

Պոեմի առաջին գլուխներում ավելի ընդգծված ներկայանում են հեղինակ Փորը Հովհաննեսը, Նարեկացին ու Ամրոսիկիը. նրանք են նախ Դանտեի ապա եւ մյուսների առջեւ բացում հայոց մեծ ողբերգության վարագույրը, պարզում նրանց խորախորհուրդ այցելության նպատակը: «Հոգերի ատեղն աչքերով գինած, մի աչքդ՝ բրի նման շողացող, մյուս աչքն արցունքի նման դողացող» Գարիբալդի-Ամրոսիկիկ է, որ

Լեզվի բոցն հանում սրտի հնոցից՝
Բացում էր ոժոխքն հայ դաղթեսական:

Շարունակությունը՝ էջ 7

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵԿԵՂԵՑԻ

Սկիզբը՝ էջ 3

Հրաշքի ապացույցներից

Քրիստոնեության տոների պատմությունները լի են հրաշքների հիշատակությամբ, որին ոմանք թերահավատությամբ են նայում՝ մտածելով, թե շատ բաներ հորինված են: Բայց եթե կա Աստված, ուրեմն մտացածին չեն թրիստոնեության մեջ հիշվող հրաշքները, իսկ Աստծո գոյության ամենահզոր ապացույցներից մեկը մարդու խիղճն է. որտի՞ց է գալիս այն սարսափը, որ պղտորում է մարդու մեղադարտ երջանկության օրերը: Ոչբան հիանալի է ասված, թե՝ վագրը պատառոտում է իր որսը եւ հանգիստ քնում, մարդը դառնում է մարդասպան եւ տառապում անդնությամբ:

Հրաշքի եւ աստվածաշնչի ընթերցանության մասին

Ինչո՞ւ մեր ժամանակներում արտասովոր հրաշքներ հաճախակի չեն լինում: Նախկինում մարդիկ ընկած էին կապաչառության մեջ եւ միայն ցնցող երեւույթները նրանց կարող էին պոկել նյութականից եւ բարձրացնել դեպի հոգեւորը: Մինչդեռ հիմա մարդիկ նման ցածր մակարդակի վրա չեն եւ այսօրվա մարդկանց տրված է ամենաազդեցիկ միջոցը, որն է Աստծո խոսքը: Հրաշքի վրա հիմնված հավատը հաստատուն չէ եւ հրաշքով հավատացած մարդիկ առաջին իսկ ոռիթի դեպքում կարող են երես դարձնել Աստծուց: Սա է ցույց տալիս իրեաների պատմությունը, որոնց մեջ բազում հրաշքներ կան, սակայն նրանք հավատարիմ չմնացին Աստծուն: Եկեցեսյան հեղինակներից մեկը նշում է, որ այլ կերպ է մարդու վրա ազդում հրաշքը, եւ այլ կերպ՝ Աստծո խոսքը: Աստծո խոսքն ազդում է միանգամից մարդու մտքի եւ սրտի վրա: Հրաշքը եւս ազդում է մտքի եւ սրտի վրա, սակայն ազդում է զգայարանների միջոցով եւ այսպիսի միջոցներավրված ազդեցությունը ցանկալի արդյունք չի տալիս: Այդպիսին են նաեւ աստվածաշնչյան թեմաներով նկարահանված նույնիկ ամենաազդեցիկ ֆիլմերը, որոնք դրեսելիս ազդվում են առաջին հերթին մարդու զգայարաններ, բայց որոշ ժամանակ անց մարդը նորից պկսում է ապրել իր սովորական կյանքով՝ առանց հավատքի մեջ կատարելագործված լինելու: Այսօր մեզ տրված ամենամեծ հրաշքներից մեկը Աստծո խոսքն է, որը գրված է Աստվածաշնչում եւ որը կարող է փոխել մարդուն, տանել դեպի կատարելություն: Զարմանալի է, որ Սուրբ Գիրքը, այդքան դարեր արտագրվելով եւ փոխանցվելով սերնդեսերունդ, պահպանվել է իր անաղարտությունը եւ այժմ էլ այնպիսին է, ինչպիսին որ էր հազարավոր տարիներ առաջ: Այդ եւ ապացուցում հատկապես նախկին Հրեական թագավորության տարածքում՝ Քումրանի բարանձավներում, 1947 թ. հայտնաբերված Սուրբ Գրքի հնագույն ձեռագրերը: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, թե հնարավոր է, որ չփրկվի նա, ով անընդհատ վարժվում է Սուրբ Գրքի ընթերցանության մեջ: Ըստ ժողովրդական մի առածի՝ կարդալ իմացող եւ չկարդացող մարդն ավելի լավ չէ, քան կարդալ չկարդացող մարդը: Հեկարդալ, եթե երկար ժամանակ տեսարան, եթե երկար ժամանակ է, որ ձեր ձեռքը չեր վերցրել Աստված մարդուն եւ կամ ընդհանրապես չեր ընթերցել այն, մի հապաղեք, ընթերցեք Սուրբ Գիրքը եւ կգտաք, թե Աստծո խոսքն ինչպես է փոխում ձեզ եւ ձեր կյանքը, կտեսնեք, որ բեեւ արտաքին արտառոց նշանեներով հրաշքներ չեն լինում ձեր շուրջ, բայց կատարվում է ամենահիանալի՝ երեխայի պես նետվում եք Աստծո գիրկը՝ գտնելով հոգեւոր խաղաղություն եւ բացցահայտելով երջանկության գաղտնիքը:



Շարունակելի

Տ. Ադամ քհն. ՍԱՎԱՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Սկիզբը՝ էջ 4

Այս ոգին ավելի է խորանում անմիջապես շարունակվող հետագա տողերում՝ հավերժական ժամանակի առջեւ ի ցույց դնելով իր կյանքի կարճ տեւողության մեջ իսկ մարդու ոչնչաչածությունը. «Անցյալը անհայտ, եւ ապառնին կասկածելի, Բնակարանս է կավեղեն, եւ անձրեւներ են ուզեսկաի, Միտքս չարախնամ եւ տենչերս չարակամ, Խաբկանքներն են հիմնական, եւ խաղալիքները տղայական, Ամբարները ոչնչությամբ են լի, եւ ապահեստները քամով, Ստվերի եմ նման, եւ

կերպարանքս է ծիծաղելի, Եւ ես մահացա կյանքի համար, եւ կարոտյան համար կենդանացա...» (ՇԵ, գ): Իր տեղը չգտած մարդն է, որ կատարյալին, շատին, մեծին ձգտելով՝ եղածն էլ կորցրել է. «Կամենալով ուզիկի վազել՝ սուզվեցի սաստկապես, Անչափելիին ձգտելով՝ չկարողացա հասնել իմ չափին Ուզելով մնալ ամբողջական՝ մանրապես մասնատվեցի, Անենչանի հետեւից գնալով՝ կարելորիդ զրկվեցի, Ուխտը պահել ուզելով՝ դաշինքը որժեցի» (ՇԵ, գ):

Նարեկացին թվարկում է տուրբերի ու երանելիների անուններ եւ ասում, որ ինքը ո՛չ Հորն է, որ իրեն արդար ու անարատ համարի, ո՛չ Օրվսեան է, որն ասում էր. «Տերը պիտի ճանաչի նրանց, ովքեր իրենն են», ո՛չ Դավիթն է, որ վստահ իր մաքրությանը՝ խոսք է ուղղում Տիրոջը. «Եթե սրտիս մեջ անօրինություն տեսնեի, Տերն ինձ չէր լսի», ո՛չ Եռիպիտ է նման, որն իրեն Աստծու այր է կոչում, ո՛չ Երեմիան է՝ «Ճշմարտությունդ կորինակեի», ո՛չ Եզեկիան է՝ «Քո աչքի առաջ ես արդարությամբ քալլեցի», ո՛չ էլ Պողոսն է, որն իրեն համարեց Աստծու խոսքի ընակավայր, այլ «անօրեն» Նարեկացին, որ իր այդ «անօրենությամբ» դառնում է նույն այդ ընտրյալներին դասակից:

Մեղավորի ու անմեղի այս հավերժական պայքարի հիմքում ընկած է կյանքի եւ մահվան հիմնահարցը. ԻՆՉ է մարդու կյանքը եւ ինչպիսին պիտի լինի այն: «Ծաղրվում եմ միշտ ու չեմ խրատվում» (ԿԲ, ա), - ասում է բանաստեղծը՝ ի ցույց դնելով կյանքի մարդակործան ծաղրը, խաբքը, խայտառակությունը, որի մեջ նա պիտի ապրելու ճանապարհը ճշտի՝ ճանապարհին ընկած ուղիղ խոսքի սերմը լտորդելով (Կ, դ):

Նարեկացին կյանքում պարտվածների, կորածների հետ է, որովհետեւ նախեւառաջ նրանց հոգիները պիտի փրկել: Նա ոչ թե անիծում է շեղվածներին, այլ ճանապարհ է ցույց տալիս՝ աստվածային ներում է հայցելով բոլորի համար: Նարեկացին մեծ ներուժի պատգամախոսն է, քանի որ արդարերին ու անարդարներին բաժանող սահմանը մարդը չի գծել, այլ կյանքն՝ իր օրինակներով: Մարդու փրկությունը դառնում է գերնպատակ, ուստի, առանց երկմտելու, հայտարարում է. « Ողբաանց եղկամվի կրակների մեջ, Այնպես էլ մեղավորները այրվեն պիտի բոցերում բորբոքք»: Լաքեց սաղմոսի այս խոսքի համար. «Կրակի կայծեր պիտի թափես դու նրանց վրա»» (ԿԲ, բ): Եվ այսքանից հետո, «Կյանքի օծումը պարգեւիր ինձ՝ քեզ աղաչողիս» (ԿԲ, գ), այնուհետ՝ ինքն՝ քեզ աղաչողիս» (ԿԲ, գ), այնուհետ՝ տեւ նույն ուղղությամբ խոսքը շարունակում է՝ դու «ինձ երբեք կորչելու տեղիք չես տալիս» (Կ9, ա):

Այս ամենի նախասկիզբը մաքրագործվող հոգին է: Նորից ու վերստին Նարեկացին իր ասածն է պնդում եւ իր պնդածը հաստատում. «Ամոթալի արարքներս նշավակեցի, Գաղտնիքներս հրապարակեցի, Ծածուկներս հայտնեցի, Թաքցրածներն ի ցույց հանեցի...» (ԿԵ, ա):

Անխուսափելի վախճանի առջեւ կանգնած՝ նա ինքն իրեն կենդանի չի համարում, ապա եւ շարունակում. «ոչ էլ կորած եմ կարծում ես ինձ», քանի որ, ըստ նրա, կա «Նորոգման հրաշքը», որին հավատում է (ԿԵ, գ):

Նարեկացին իրեն տեսնում է եւ՝ ապրողների մեջ, եւ՝ մեռյալների: «Հողապատյան շիրիմի ծածկույթի տակ հողում լուծված մարմինը» (Կ2, ա) նրա համար հավերժական ժամանակի խորհուրդն է կրում, բայց անմահ է հոգին, որ անցյալի տուրբերի ոգեկանչությամբ իր ապրելու իմաստն ու տեղն է ճշտում նույն հավերժական ժամանակի մեջ:

Մի կողմից. «Մոխրիս մերժելի մի՛ կանչիր դատաքննության» (Կ2, բ), մյուս կողմից. «Ի լուր համբավի սարսափում եմ...» (Կ2, ե):

Որքան մեծ է փրկության հույսը, նույնքան է «... սահմանափակ է մարդկանց փրկության կարողությունը» (Ռ, գ): «... Ո՞ւր փնտրեմ փրկությունս ես...» (ՀԱ, գ), - աղաղակում է Նարեկացին, քանի որ անհաղթահարելի է թվում մարդու երկդիմի բնույթը. « Հրեշտակ եմ դառնում երեսանց ու խորհուրդների մեջ դիվանում...» (ՀԱ, բ): Այս մտակառույցը իշխում է ամբողջ գրքում եւ, ըստ Նարեկացու, մարդը ներքուստ չի միավորվում, չի ամբողջանում սուրբ էությամբ, սատանան մարդու մեջ միշտ իր սեւ գործն է անում: Ու Նորից այդ սեւ թույնը Նարեկացին իրենով է ներկայացնում. «Չկա ոչ ոք մեղավոր ինձ պես, ոչ ոք՝ անօրեն, Ոչ ոք ամբարիշտ, ոչ ոք անիրավ, ոչ ոք չարագործ, Ոչ ոք դատապարտված, Ես եմ այդ բոլորը, եւ բոլորի հանցանքներն իմ մեջ են» (ՇԵ, բ): Եվ իրենով էլ մաքրագործում է. «Ցանի՛ր խայտառակությանս նախատինքներն ամոթալի, Ճանգիստ պարգեւիր մեղքերի բեռով սաստիկ հոգնածիս» (ՇԵ, գ): Այդպես նա փորձում է իր վրայից հանել դատապարտության կնիքը եւ փրկել հոգին:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԵՆՈՒՆԳ Ա ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 3

* Երբ Բեթսայիդայում Իր ձեռքը դրեց կույրի աչքերի վրա, դրանք բացվեցին ու տեսան (Մարկ. 8.25):

* Երբ երկար տարիներ արյունահոսությունից տառապող կինը, որ իր ողջ ունեցվածքը ծախսել էր բուժվելու համար եւ հաջողության չէր հասել, պարզապես դիպավ Հիսուս հագուստին, «իսկույն նրա արյան աղբյուրը ցամաքեց, եւ նա իր մարմնից հասկացավ, որ տանջանքից բժշկվեց» (Մարկ. 5.29):

6. **Որոշ հրաշքներ գործվել են նույնիսկ առանց որևէ հրամանի, պարզապես Նրա կամենալով:**

* Երբ բորոտն ասում է Հիսուսին. «Տեր, եթե կամենաս, կարո՛ղ ես ինձ մաքրել», Տերն Իր ձեռքը պարզում է եւ դիպչում նրան՝ ասելով. «Կամենում եմ, մաքրվի՛ր»: Եվ իսկույն բորոտությունը վերանում է (Մատթ. 8.2-3):

* Գալիլեայի Կանա քաղաքում հարսանիքի ժամանակ, երբ ջուրը գինու է վերածվում, Նրա կողմից մի նոր նյութ է ստեղծվում պարզապես Նրա կամենալով, առանց որևէ հրամանի կամ նույնիսկ հայման, միայն Նրա ներքին ցանկությամբ (Հովհ. 2.7-9):

7. **Տիրոջ բոլոր հրաշքները կատարվել են առանց աղոթքի:**

Տերն Իր հրաշքները գործում է սեփական զորությամբ, որն Իր աստվածության զորությունն է: Միակ հրաշքը, որ կատարվում է Հոր դիմելուց հետո, Լազարոսին հարությունն տալն է: Նրա պատճառը, հավանաբար, այն է, որ Նա կամենում էր սատանայից ծածկել Իր աստվածությունը, քանի որ միայն մի բանի օր էր մնում մինչեւ Իր խաչելությունը: Նաեւ հնարավոր է, որ աղոթքին հաջողված Իր այս միակ հրաշքով Նա ձեզ սովորեցնում է աղոթել, եւ թերեւս սա պատասխան է Նրա բշնամիներին, ովքեր Նրան մեղադրում էին հրաշքները սատանայի զորությամբ գործելու մեջ: Այնուամենայնիվ, Լազարոսին հարություն տալիս Տերը դարձյալ հրաման է տալիս. «Լազարո՛ս, վե՛ր կաց, դուրս եկ» (Հովհ. 11.43):

ՄԱՍ Դ

ՏԵՐ ՀԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՆՐԱ ԲԱՑԱՌԱԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Բազմությանը կերակրելու հրաշքի նկարագրության մեջ գրված է, որ Նա նայում է դեպի երկինք, օրհնում ու գոհանում, այսինքն՝ շնորհակալություն հայտնում (Մարկ. 6.41, Մատթ. 15.36): Սակայն նմանատիպ երկու հրաշքներից եւ ոչ մեկում չի նշված, թե Նա ասդրում է: Ինչ վերաբերում է դեպի երկինք նայելու եւ ուսելուց առաջ օրհնելուն, դա կարող է մեզ ուսուցանելու նպատակով կատարված լինել:

8. **Նրա անունով կատարված շատ հրաշքներ են հիշատակվում Նոր Կտակարանում:**

Մի այսպիսի օրինակ է «Գեղեցիկ» կոչվող դռան մոտ նստող եւ ողորմություն խնդրող կաղ մարդու բժշկությունը: Սր Պետրոսն ասում է նրան. «Արծաթ ու ոսկի չունեմ, բայց ինչ որ ունեմ, ա՛յն կտամ քեզ. Նազովրեցի Հիսուս Քրիստոսի անունով վեր կաց ու քայլի՛ր» (Գործք 3.6): Սա պարզ երեւում է մաեւ հենց Տիրոջ խոսքում. «Հավատացողներին կհետեւեն հետեւյալ նշանները՝ Իմ անունով կհանեն դեւեր...» (Մարկ. 16.17):

9. **Սա՛ է տարբերությունը անձամբ Տեր Հիսուսի կողմից կատարված հրաշքների եւ նրանց միջեւ, որոնք կատարվել են Նրա առաքյալների ու սրբերի կողմից:**

Տերը հրաշքները գործում է Իր սեփական զորությամբ, մինչ Նրա աշակերտները՝ Նրա անունով կամ Նրանից ստացած զորությամբ, այսինքն՝ Նրա՝ խլանությամբ ու զորությամբ: Ուստի Պողոս առաքյալն ասում է. «Կարող եմ ամեն ինչ Քրիստոսով, ով զորացրեց ինձ» (Փիլ. 4.13):

Այս իշխանությունն՝ աշակերտներին տվել է Տերը. «...նրանց իշխանություն տվեց պիղծ ոգիների վրա՝ հանելու նրանց եւ բժշկելու ամեն ցավ ու ամեն հիվանդություն» (Մատթ. 10.1): Նա տասներկու առաքյալներին ասում է. «Հիվանդներին բժշկե՛ք, բորոտներին սրբե՛ք, դեւերը հանե՛ք, ձրի առաք եւ ձրի՛ տվեք» (Մատթ. 10.8): Եվ յոթանասուն աշակերտներին էլ ասում է. «Ահա ձեզ իշխանություն տվեցի կոխոտելու օձերը, կարիճները եւ բշնամու ամբողջ զորությունը» (Ղուկ. 10.19):

10. **Տեր Հիսուսը մատնանշում է Իր հրաշագործությունները որպես միջոց, որ կարող է մարդկանց առաջնորդել Իր հանդեպ հավատի:**

Նա ասում է. «Հավատա՞՝ւմ եք Ինձ, որ ես Հոր մեջ եմ, եւ Հայրը՝ Իմ: Իսկ եթե ոչ՝ գոնե գործերի՝ համար հավատացեք Ինձ» (Հովհ. 14.11): Հրեաներին էլ ասում է. «Եթե Իմ Հոր գործերը չեմ անում, մի՛ հավատացեք Ինձ: Իսկ եթե անում եմ, թեկուզ Ինձ էլ չհավատաք, գործերի՛ն հավատացեք, որպեսզի իմանաք եւ ճանաչեք, որ Հայրն Իմ մեջ է, եւ Ես՝ Հոր» (Հովհ. 10.37-38):

Տիրոջ խոսքը, որ Ինքը կատարում է Իր Հոր գործերը, ճշգնանում է, որ Ինքը կատարում է հենց Աստծո գործերը, եւ սա էլ Նրա աստվածության պարգորոշ ապացույց է: Ահա թե ինչու է Նա մեղադրում հրեաներին՝ ասելով. «Եթե կատաքած չլինեին այն գործերը, որոնք ուրիշ ոչ ոք չկատարեց, նրանք մեղք չէին ունենա» (Հովհ. 15.24):

Այս գործերով, որոնք ուրիշ ոչ ոք չի արել, նկատի են առնվում հենց Աստծո գործերը, ինչի մասին Քրիստոսն Ինքն է ասում (Հովհ. 10.37): Այսպիսով, Նա հայտարարում է, որ Իր հրաշագործություններն Իր աստվածության ապացույց են:



11. **Տեր Հիսուսը երանության է արժանացնում Իր հրաշքների հանդեպ հավատը եւ այդ հավատն ունենալու կոչն անում:**

Նա երանության է արժանացնում հարությաչափի հավատը, երբ սա խնդրում է Նրանից. «Ասա՝ խոսքով, եւ ծառաս կբժշկվի» (Մատթ. 8.8): Հարյուրապետի ծառան անդամալույծ պառկած էր տանը եւ սաստիկ տանջվում էր. Տերը խոստանում է բժշկել նրան, եւ նա հենց նույն ժամին բժշկվում է: Տերը հիացմունքով ասում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, նույնիսկ Իսրայելում նրանք այսպիսի հավատ չգտան» (Մատթ. 8.10): Հարյուրապետի հավատը զարմանք է պատճառում, որովհետեւ նա հավատում է, որ Քրիստոսի նույնիսկ մի խոսքը կարողություն ունի իր ծառային բժշկելու՝ հեռավորության վրա, նույնիսկ առանց նրան դիպչելու կամ ձեռքը նրա գլխին դնելու՝ օրհնության համար: Տիրոջ միայն հրամանը բավական է: Այս պատճառով էլ Տերը երանության է արժանացնում այսպիսի հավատը եւ այն հաստատում ծառային բժշկելով:

Շարունակելի

Թարգմանությունը՝
Ս. ՍԱՍԱՐՈՒՑՅԱՆԻ

ՑԵԼԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՎԱՆՆԻ ՇԻՐԱԶԻ «ՀԱՅԻՑ ԽՆԹԻԿԱՆԸ» ՊՈԵՄԻՄ

Սկիզբը՝ էջ 5

Քայլ առ քայլ բացվում են Արեւմտյան Հայաստանում ու շրջակայքում բուրաբեղին իրական դժոխքի պարուհակները, եւ հայ ու այլազգի ուրվականերպարները աստիճանաբար հասնելիս լինում են՝ տեսնելով եղեռնադժոխքի սարսափները: Դաւնեան առաջին տեսարանները կարծես խաղաղ է ընդունում, լռում է, ինչպես իր երկիրն ու սիփինքսաշուրթ եվրոպան, «քաջ Ամերիկան, քարե Ազիին, քարե Լյոնսիսը, քարե Հաբալը, քարե Ճապոնն ու քար Չինմաչինը», բայց երբ տեսնում է իր երեւակայությամբ ստեղծած դժոխքից ավելի զարհուրելի պատկերներ, ինքնապաշտպանության հնարավորությունից խաւսպես զրկված մի ողջ ժողովրդի բնաջնջելու բուրբերի դիվային արարքները, լսում

Անդրանիկի, Փոքր ու Մեծ Հովհաննեսների, Մաշտոցի, Խորենացու, Նարեկացու մեկնությունները, սոսկում է, ինքն էլ նզովում է իր ու մյուս ազգերի եղեռնագործի բռությունը: Նրան միանում են նաեւ մյուս մեծերը, ու բազմազգ ոգեկիսմբը միավորվում է ընդդեմ չարաբարոյության: Նրանց պայ հանեաբաշխությունը, եղեռնը միասնաբար դատապարտելու համախմբը վճռականությունը դառնում են անկասելի ուժ, որի դեմ անզգոր է Պոլսում մեծ ոճրարքոջից՝ Եղոդզից, նրանց վրա հարձակվող ցեղրերաւմաց բուրը գամփռը.

Ժամիքը ձգեց Հոմերին ծլուման,
Որ չպահանջե Բռսիթորը հուսաց,
Ձգեց, բայց փշրեց ժամիքն էլ չորրորդ:
Ժամիքը ձգեց մեծ Խորենացուն,
Որ թաղեր հայոց մասյանված ածուն,
Ձգեց, բայց փշրեց ժամիքն հինգերորդ...
... Ժամիքը ձգեց Դանիելին մոլոր,
Որ չվկայեր՝ թե տեսածն իրավ դժոխք է մի ՇՈՐ;
Եվ իսկույն ձգեց Փորը Հովհաննեսին,
Որ էլ չզոռա՝ «Փրկել Մասիսին...»,
Ձգեց, բայց գժվեց, վեր բռավ, ընկավ,
Վերջին ժամիքը իր կողը խրեց եւ շնանգավ...
Եվ մենք Հոմերի աչքով էլ մրին՝
Շամ մի աչքի մեջ տեսանք թալեաթին,
Մյուս աչքի մեջ սուլթանին տեսանք...



Պատկերն իրոք ընդգրկուն է ու բազմաձայթ. բուրք գամփռի բոլոր ժամիքները պիտի փշրվեն, եթե միավորվեն աշխարհի բարի կամքի տեր մարդիկ եւ պատասխան պահանջեն ոճրագործից ու նրան կանգնեցնեն տեղ դատաստանի առաջ:

Համաշխարհային տիրապետության ձգտող, Մեծ Թուրան ստեղծելու պաճուրբրական տեսլականով ոգեւորված Թուրքիան համառորեն ջանում է աշխարհին ապացուցել, թե Արեւմտյան Հայաստանի տեղաբնիկ միլիոնավոր հայերին ինքը չի կոտորել, նրանց հայքենիքին ինքը չի խլել, այսօրվա ամբոխահայերի նախնիներին ինքը չի վոնդել նրանց բնօրրանից ու պապանական հողերից, իսկ այնուեղ գտնվող ավերված, կիսականգուն ու դեռ կանգուն պատմամշակութայնի հուշարձանները էլ իրենց՝ բուրքերի ստեղծածն են, եւ միակ ապացույցը նրանց վրա եղած խաչերն ու հայերեն վիմագրերը ջնջել-բերել-վերացնելն է ու նրանց վրա կիսաբուսիկ դրոշմելը կամ բուրքական դրոշ ծածանելը:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մենության հոգեվարք

ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՖԻՍԿԻ (ՇԱԽՈՎՍԿՈՅ)

Սկիզբը՝ թիվ 16

Ա

«Ո՞ր ես» (Ծնն. Գ 9), մա՛րդ, եւ կանչում է Աստծո Հոգին դարձյալ հինկտակարանյան նույն Ադամին՝ մարդկությանը: Եվ յուրաքանչյուր մարդ, գիտակցաբար թե անգիտակցաբար, իր հոգու մղումով պատասխանում է Աստծուն. «Լսեցի քո ձայնը այստեղ՝ դրախտում, ամաչեցի, որովհետեւ մերկ էի, եւ թաքնվեցի» (նույն տեղում, 10): Մարդուց փախուստը Աստծուց հեռանալու միայն երկրորդ փուլն է: Աստծուց հեռացած, բայց մարդուց չհեռացած անձինք դեռեւս կարող են Աստծուն վերադառնալ: Անհավատի բնազանցական (մետաֆիզիկական) հեռացումն Աստծուց, մարդունը՝ մեկ այլ մարդուց, բարոյական սոլիպսիզմի (տեսություն, ըստ որի՝ գոյությունն ունի միայն մարդը եւ նրա գիտակցությունը- թրգմ.) վերջին ձեւն է, մարդկության չարորակ ուռուցքը, որի զարգացումը տանում է դեպ թեպ Աստված, այլ դեպի սեփական եսասիրական էությունը:

Չարերի վախերը ծառայում են չարին: Մարդը վախենում է ինքն իրեն աղքատ ու մերկ հոգի համարելուց: Գիտակցելով իր մերկությունը՝ վախենում է իր ճակատն ու իր մշտնջենականությունը (մարդկայնությունը) դարձնել դեպի Աստված: Եվ դրանից վախենալով՝ վախենում է աշխարհում ինչ-որ տեղ, կամ էլ հենց իր կյանքում Աստծուն բացահայտելուց: Այս կերպ մարդն Աստծո երեսից հեռն իրեն վտարում է «արտաքին խավար», ուր «կլինի լաց եւ ատամների կրճտում» (Մատթ. Ութ 30), անելանելի տառապանք մարդկային հոգու, որը չի կամենում մեռնել մարդկային հոգու, որը չի կամենում մեռնել մարդկային հոգու, որը չի կամենում մեռնել

Աստվածային առաջնորդությամբ կյանքի ընկեր ընտրելու ճշմարիտ կերպի, քրիստոնեական ամուսնության եւ ընտանեկան երջանկության մասին

«Յ*ուրաքանչյուր մարմին միանում է իր տեսակին, եւ յուրաքանչյուր մարդ հարում իր նմանին»:*

Սիրաք ԺԳ 20

Ծնունդ Գիրքը պատմում է, որ երբ Աստված երկրի հողից ստեղծեց առաջին մարդուն՝ Ադամին, նրան տեղավորեց բերկրության դրախտում (տե՛ս Բ 7, 15): Սակայն Աստծո պատկերն ու նմանությունն ունեցող մարդը միայնակ էր, քանի որ «չգտավ իր նմանությունն ունեցող մի օգնական» (Բ 20): Եվ Տեր Աստված ասաց. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծենք նրա համար» (Բ 18): Եվ Աստված Ադամից վերցրած կողոսկրից ստեղծեց կնոջը՝ Եվային: Աստված օրհնեց նրանց եւ ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցո՛ւ երկիրը...» (Ա 28): Դեռեւս դրախտում Աստծու կողմից հաստատվեց Պսակի խորհուրդը, Աստված օրհնեց ամուսնությունը եւ տղամարդուն ու կնոջն օրհնությամբ դարձրեց մեկ մարմին: Ընտանիքն Աստծու ստեղծագործության ամբողջացումը եղավ: Ուստի ամուսնության կոչված յուրաքանչյուր առամորդի ճշմարիտ ամուսնության մեջ գտնում է երջանկության լրությունը: Ս. Պողոս առաքյալն ասում է. «Պարոնկանայու համար՝ յուրաքանչյուր մարդ թող իր կին ունենա, եւ ամեն կին՝ իր մարդը» (Ա Կորթ. Է 2): Ամուսնությունն օգնում է ողջախոհ կյանք վարել՝ նրանում գտնելով հոգու խաղաղություն եւ հանդարտություն, միաբանություն եւ բարեպաշտ ընտանիք: Ամուսնությունը սուրբ եւ ալիրական խորհուրդ է, ուստի Եկեղեցու հայրերն ուսուցանում են մեզ ճշգրտությամբ մտահանել ամուսնությանը, լինել ողջախոհ եւ չսխալվել կյանքի ընկեր ընտրելու հարցում: Ցավոք, հոգեբոր ընկալումից զուրկ, աշխարհիկ մտածելակերպով օժտված շատ հայորդիներ այսօր կյանքի ընկեր, կողակից ընտրելիս նախապատվություն են տալիս նյութական հարստությանը, արտաքին գրավչությանը, հասարակության մեջ հիրեց ընտրյալի գրաված դիրքին, այսինքն՝ բնավ չեն հոգում աստվածային եւ հոգեւորի մասին, չեն տարբերում կարեւորն անկարեւորից: Մինչդեռ քրիստոնյայի համար, ով փնտրում է իր ապագա կյանքի ընկերոջը, առաջնային եւ կարեւոր է մարդու հոգու գեղեցկությունը, այսինքն՝ թե ինչ հոգեւոր առաքինություններով, շնորհներով է օժտված նա, որն ըստ սուրբ Հովհան Ոսկեբերանի՝ «ոսկուց ավելի թանկ է»: Եթե մարմնավոր գեղեցկությունը տարիների ընթացքում կարող է թոշնել, ապա հոգեւոր գեղեցկությունն անանց է եւ մնայուն. «Երբ ամուսնական սերը նյութին վերա հաստատվի, նյութը կսպառվի, սերը տեղի կուտա, իսկ երբ բնական պարզ եւ ճշմարիտ սիրո վերա հաստատվի, միւիչ ի գեղեցման անշարժ կմնա միտության շեւեքը...: Երբչափկ են այդ սիրով միավորյալ ամուսինքը: ....Այդ կեղծդանի սիրո հիմն է, որ կարող է միայն անկործանելի հաստատուն պահել ընտանեկան կյանքին երերուն շեւեքը՝ աշխարհին հողմերուն եւ հեղեղներուն բախման առաջ» (Խրիմյան Հայրիկ): Եկեղեցու սուրբ հայրերի ուսուցման համաձայն՝ տղամարդու սերը կնոջ նկատմամբ պետք է հիմնված լինի բանականության վրա, եւ հարկ է սիրել մտքով. դա՛ է իսկական սերը, սեր, որը պայմանավորված չէ մարմնական գեղեցկությամբ, ուստի հաստատուն է եւ ճշմարիտ: Իսկ ինչպե՞ս ճիշտ ընտրություն կատարել, ինչպե՞ս հասկանալ Աստծու կամքն ապագա կյանքի ընկեր ընտրելու հարցում: Քրիստոնյան, ով ապահովելով է աստվածային նախախնամությանը, հավատում եւ վստահում է Աստծուն, գիտի, որ եթե ինքը կոչված է ամուսնության, ապա Տիրոջ ողորմածությամբ եւ նախախնամությամբ մի օր անպայման կիանիպի նրան, ով Աստծու նախախնամությամբ դեռ աշխարհի սկզբից էլ նախասահմանված է իր կողակիցը լինելու: Չպետք է միայն հավատալ ու սպասել՝ մատնվելով անգործության: Սուրբ Պողոս Առքիանեպոլսեցին այս մասին ասում է, որ «նախասահմանությունը կատարվում է աղոթքներով, ինչպես նախորոշել է Աստված»: Հարկ է խոնարհությամբ, մաքուր սրտով եւ ջերմեռանդությամբ աղոթել եւ Աստծու կամքը փնտրել, բարի վարքով, առաքինությամբ, ազնվությամբ կենցաղավարել՝ արձանալով Տիրոջ բարեհաճությանն ու ողորմությանը, քանի որ Աստված արձանավորների խնդրանքներն է կատարում եւ խոնարհներին է շնորհ տալիս: Աստված ավելի լավ գիտի, թե ինչ է մեզ անհրաժեշտ, մեզ համար բարի: Հարկ է միայն հնազանդել Տիրոջ կամքին, իմաստնաբար փնտրել եւ գտնել Աստծու ցույց տված ճանապարհը, քանի որ բազմագութ Աստված բազմապիսի կերպերով մեզ ցույց է տալիս ճանապարհը, հասկացնում Իր կամքը, միայն թե մենք հասկանանք եւ գիտակցենք այդ:

Քանի որ Սուրբ Ամուսնությամբ՝ Պսակի խորհրդով այր ու կին խորհրդավորապես միանում են միմյանց՝ դառնալով մեկ մարմին, ինչպես Սուրբ Գիրքն է վկայում. «.... եւ երկուսը մեկ մարմին պիտի լինեն» (Մատթ. ԺԹ 5), ապա հարկ է խոհեմությամբ, լրջորեն, աղոթքներով եւ աստվածային կամքի համաձայն ընտրել ապագա կյանքի ընկերոջը՝ պատրաստ նրա հետ կիսելու կյանքի թե՛ուրախությունները, թե՛ դառնությունները ու տառապանքը: Ամուսնական երջանկությունը հիմնվում է ամուսինների փոխադարձ սիրո, վստահության, հարգանքի եւ հավատարմության վրա: Սուրբ Հոգի. Ոսկեբերանն ասում է. «Չկա ավելի թանկ բան, քան կնոջ կողմից սիրված լինել եւ սիրել նրան: Երբ ամուսինները համաձայնության մեջ են, դա իմաստուն երանություն է»: Սակայն սուրբ Ոսկեբերանը զգուշացնում է նաեւ, որ «ամուսինների փոխադարձ սերը չպետք է կախված լինի յուրաքանչյուրի մարմնական գեղեցկությունից եւ չպետք է մարի այն դեպքում, երբ նրանցից մեկն ինչ-ինչ պատճառներով տգեղանա կամ նույնիսկ այլանդակվի»: Ուստի սրտի ամուսնական կյանքում պետք է լինի մշտական եւ այնպես ամուր, որ դիմակայի բոլոր դժբախտություններին, դառնություններին եւ գայթակղություններին:

Ուրեմն, գիտակցելով, որ ամուսնությունը «մեծ խորհուրդ է» (Եփես. Ե 32) եւ ճանապարհ է դեպի փոխադարձ սրբացում, հնարավորինս խուսափենք սխալ ընտրություն կատարելուց, այլ հարատեւ աղոթքով, աստվածային առաքնորդությամբ, թելադրանքով ընտրենք մեր կյանքի ընկերոջը՝ կառուցելով մեր ընտանեկան երջանկությունն անսահման հավատի, ճշմարիտ՝ բանականության վրա հիմնված սիրո, ներողամտության եւ անկեղծության անխախտ հիմքի վրա:

Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ս ենության հոգեվարք

ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՖԻՍԿԻ (ՇԱԽՈՎՍԿՈՅ)

Սկիզբը՝ էջ 7

Մարդուն տանջում է սեփական մարմինը: Մարմինն ունի երջանկության եւ վշտի, ուրախության եւ տխրության իր սեփական ճանաչողությունը: Մարմնական հույզերը մարդու համար նոր աղբյուր են դառնում տառապանքի ու վախերի՝ մարմնի վախերի եւ մարմնին զիջելու վախերի: Մարմինը կարծր, համառ ու կոպիտ է հոգու համեմատությամբ, նա ունի իր սեփական հոգեբանությունն ու կամքը: Նա առյուծի պես է հարձակվում մարդու հոգու վրա, իսկ հոգով կապված վիճակում վերածվում ողորմելի շան: Մարմինն «այս աշխարհից է» եւ չի ճանաչում մարդկային հոգու վեհ հարցադրումները. հարկ է լինում նրան պարտադրել բարի գործերի, աղոթքի, ինքնազոհության: «Ընչա՞վոր» մարմինը (Ա Կորնթ. ԺԵ 44) շատ բաներից է վախենում: Այն համաձա է դողում այն ժամանակ, երբ մարդու հոգին մնում է խաղաղ եւ Աստծո ձեռքերի մեջ հանձնված (սա բազմաթիվ հավատացյալների փորձառությունն է՝ ապրված օդային ռմբակոծումների ժամանակ): Մարդը վախենում է ինքն իրեն հանդիպելուց, քանի որ իրեն գտնելով՝ կարող է գտնել եւ Աստծուն: Իսկ մարդը չի ուզում հանդիպել Աստծուն: Այդ իսկ պատճառով էլ մարդը սարսափում է իր մեծ խորությունից եւ ողջ կյանքի ընթացքում խուսափում է իր մեջ գեթ փոքր-ինչ խորանալուց: Նրա կյանքի ողջ վազքը, աշխարհի ողջ եռուզեռը, քաղաքակրթության դիտավիկան՝ կյանքի իր համահարթեցմամբ ու միօրինակեցմամբ, նրա զվարճությունները ու հետաքրքրությունները, հոգսերը, ծրագրերն ու խանդավառությունը, ասես հեռացնում են մարդուն Աստծո երեսից եւ զրկում նաեւ մարդկային դեմքից: Սակայն «Ո՞ւր պիտի գնաս ես Քո Հոգուց, Տեր, կամ Քո երեսից ո՞ւր պիտի փախչես» (Սաղմ. ՃԼԸ 7): Դեռեւս շատերը չեն հասկանում սա: Անհավատ կամ թերահավատ մարդկության պոռթկումն ուղղված է իր խորությունից, իր լռությունից, որտեղ թաքնված է դրախտային երանությունը, որտեղ Աստված հանդիպում է մարդուն, փախչելուն: Փախչում է մարդը հոգեւոր աշխարհից: Բայց ո՞ւր: Արահետը շրջապտույտն արտաքին գործունեության, արտաքին խնդիրների, մարդկանց հետ արտաքին հարաբերությունների, ակնթարթորեն ծնվող անցողիկ հաջողությունների եւ երբեք չհագեցնող ուրախությունների: Եվ մարդն ավելի է վախենում ինքն իր հետ մենակ մնալուց: Նա այլեւս չի նայում աստղերին, լռության մեջ չի խորհում կյանքի մասին: Նրա հոգու խորքը, որ ի զորու է պարփակել Արարչի մեծ սերը, ուրախություն չի պատճառում նրան, այլ սահմանեցուցիչ տեսարան է նրա համար:



Մարդը վախենում է իր անմահ «ես»-ի խորությունից, իր բացարձակությունից, իր «ամեն բանի ընդունակ լինելուց», իր հանգանքի հնարավոր անդունդից եւ Աստծուն իր սահմանափակ ինքնահանձնումից:

Եվ ամեն ինչում մարդը վախենում է իր ցավից եւ անհայտից՝ որպես անսպասելի ցավից: Եվ վախենում է նաեւ հեռց իր ցավից, քանզի վախը ցավ է: Նույնիսկ ուրախությունից է երբեմն վախենում, քանզի ուրախությունը հաստատուն չէ եւ հեռանալիս ցավ է պատճառում: Մարդը կարող է վախենալ իր բերկրանքից հույսերից: Որքան խորն է մարդը, այնքան խորհրդավոր-անեզր է նրա հոգու աշխարհը. կարելի է հրապես ասել՝ այնպիսի հոգի, ինչպիսին մարդկային է, կարող էր տրվել միայն անմահ մարդուն:

Գիտական փսիխոպաթոլոգիան (հոգեկան ախտաբանություն) եւ փսիխոթերապիան չափից ավելի վերացականորեն են հետազոտում անընթեռնելին (ուստի եւ անհիշտ, չարի ու բարու չափանիշներից դուրս), այդ իսկ պատճառով էլ, նույնիսկ իրենց ամենաուրբ վերլուծումներում, չեն կարող հպվել մարդու կյանքի իսկական գաղտնիքներին:

Շարունակելի

Թարգմանությունը՝
Գ. ՎԱՐԱՆՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական
երկաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
Ս. Էջմիածնի ՔԿ եւ
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Ք. Վաղարշապատ, ՔԿ

Հեռախոս՝
(0+231) 54510
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տպարան
Ստորագր. 16.9.2005 թ.

Տպաքանակը՝ 2500
Գինը՝ 50 դրամ